№ 239 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ №239

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«ՄՇԱԿԻ» խմբագրութիւնը յայտնում է, որ կիրակի, հոկտեմբերի 26-ին, Խօջիվանքի գերեզմանատանը կայանալու է «ՄՇԱԿԻ» հանգուցեալ խմբագիր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ

և «ՄՇԱԿԻ» հանգուցեալ հրատարակիչ-աշխատակից

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԳՍԵԱՆ ՏԵՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆԻ

մահարձանների օրհնութիւնը և բացումը, նրանց մահվան տարելիցի առիթով: Պատարագը Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում կը սկսվի առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը և մահարձանների բացման հանդէսը կը կայանայ ժամը 12-ին:

3—1

Սոֆիա Գրիգորեան Քալանթար և իր զաւակները՝ Իզաբելլա, Լեւոն և Գրիգոր, յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, որ կիրակի, հոկտեմբերի 26-ին, Խօջիվանքի գերեզմանատանը կայանալու է հանգուցեալ ամուսնու և հօր՝

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՔԱԼԱՆԹԱՐԻ

մահարձանի օրհնութիւնը և բացումը՝ նրա մահվան տարելիցի առիթով: Պատարագի սկիզբն առաւօտեան ժամը 10½-ին, իսկ հոգեհանգիստը և մահարձանի բացման հանդէսը կը կայանայ ժամը 12-ին:

3—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ԿՈՂՄԻՑ.

Ի նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս Թիֆլիսում զգալի կերպով երևան են եկել որովայնային տիֆ և ծաղիկ հիւանդութիւնները, պարտք եմ համարում յայտնել Թիֆլիսի հասարակութեանը, որ չափազանց անհրաժեշտ է, ներկայ պատերազմական ժամանակի պատճառով, հէնց սկզբից խեղդել այդ հիւանդութիւնների տարածումը: Դրա համար և ես անհրաժեշտ գտայ դիմել հասարակութեանը հետևեալ խնդրքով.

1) Խնդրում եմ Թիֆլիսի պ. պ. բժիշկներին, բոլոր հիւանդանոցներին և քաղաքի բնակիչներին իսկոյն և եթ հաղորդել քաղաքային բժշկա-սանիտարական բիւրօյին որևէ վարակիչ հիւանդութիւնների դէպքերի մասին, որոնց թւում նաև որովայնային տիֆի և ծաղկի մասին, որպէս զի կարելի լինի սանիտարական հսկողութեան կողմից ժամանակին ձեռք առնել համապատասխան անհրաժեշտ միջոցներ:

2) Առաջարկում եմ ազգաբնակութեանը ըստ կարելոյն գործ ածել եռացրած կամ զտված ջուր (այդ նպատակով յանձնարարում եմ ունենալ «Բերկֆելդի» զտիչը):

3) Խնդրում եմ ազգաբնակութեանը ընդարձակ կերպով կատարել ծաղկի պատուաստումն և րէվակցինացիա՝ Ծաղկի պատուաստման համար ազգաբնակութիւնը կարող է օգտվել քաղաքային հիւանդանոցներից, ուր կը կատարեն այդ ձրիաբար:

4) Խնդրում եմ հասարակական հիմնարկութիւններին, ակումբներին, հիւրանոցների ու ճաշարանների տէրերին և այլն, յաճախորդներին մատակարարել բացառապէս եռացրած կամ զտված ջուր, որի համար և յանձնարարում եմ ունենալ «Բերկֆելդի» զտիչ:

առ. 948. 3—2

ՊՈՐՏԼԱՆԴ-ՑԵՄԵՆՏ ԵՒ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՆԻՒԹԵՐ ԱՐՏԱԴՐՈՂ

„ԹԱՌԻՉ" ԱԿՑ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

բացել է իր գործունէութիւնը. պատրաստում է ցեմենտ թէ շինութիւնների համար և թէ ածելու (заливочный, тампотажный):

Իր որակով ցեմենտը գերազանցում է Ճանապարհների Հաղորդակցութեան Մինիստրութիւնից հաստատված չափից:

Պատուէրները և այլ հարցերը պէտք է ուղղել գլխաւոր գրասենեակին, որ գտնվում է՝ Թիֆլիս, Սերգիէվսկայա փ. № 15. Հեռախօս № 99.

Գործարանը գտնվում է Գանձակի նահանգի Ղազախի գաւառում, երկաթուղու Թաուզ կայարանի մօտ:

առ. (և. հ. շ.) 940. 10—3

ԲԺԻՇԿ

Շուշանիկ Նաբաթեան

(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան):

Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.

Հասցէն՝ Սոլոլակ, Ռտիշչևսկայա փ. № 1.
Հեռախօս 10—58.

(և.հ.կ.) առ. 784. 100—26

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ

վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի:

Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Լերմոնտովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից:

Ս. ԶԱՒԱՐԵԱՆ
ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐ
Կ. ԽԱՏԻՍԵԱՆ

(Մահվան տարեդարձի առիթով) «ՏԱՐԱԶԻ» 1913 թ. հոկտեմբերի ալմանախ №-ը՝ նուիրված **Ս. ԶԱՒԱՐԵԱՆԻ, ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ** և **Կ. ԽԱՏԻՍԵԱՆԻ** յաւերժ յիշատակին, որանց 43 տեսակ զանազան ժամանակների լուսանկարներով, մեծադիր պատկերներով, ինքնաձեռագրերով, պ. պ. բժ. Աղասարեանի, Ա. Աթանասեանի, Ա. Եզեկեանի, Լէօնիդի, բժշկ. Բ. Նաւասարդեանի, Շիրվանզադէի, Յ. Տէր-Գրիգորեանի, Գր. Մկրտչեանի, Ար. Րաֆֆիի, Սաւասարի և այլն յօդուածներով: Մնայուն այս շքեղ հանդէսը «ՏԱՐԱԶԻ», գեղանի յիշատակ Ս. Զաւարեանի, Ալ. Քալանթարի և Կ. Խատիսեանի, իւրաքանչիւր հայ տան և գրադարանի անհրաժեշտ զարդ, մինչև առաջիկայ նոյեմբերի 1-ը վաճառվում է հատը 2 ր. փոխարէն ՄԵԿ ռուբ. 20 կ.: Կուղարկվի յատուկ խողովակներում և заказное. Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում: Հասցէն՝ БЮРО ПЕЧАТИ, Тифлисъ, Головинскій пр., № 41.

(հ. կ.) առ. 5—3

ԱՆԴԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչևսկայա 13, տելէֆոն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկի
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Բ. Փիշեր
Ս. Գ. Շահպարոնեանց

(հ. կ.) առ 868. 100—98

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Երկու հարիւր տարուց աւելի է, որ Ռուսաստանը աշխատում է լուծել արևելեան հարցը:

Լուծել արևելեան հարցը՝ նշանակում է լուծել օսմանեան տիրապետութիւնը Եւրոպայում և Ասիայում, ազատել քրիստոնեայ ցեղերը և ազգերը թիւրքական դաժան լծից:

Եւ որովհետև այդ քրիստոնեայ ազգութիւնների մէջ գլխաւոր տեղ է բռնում հայ ազգը, ուստի հայկական հարցը կազմել է միշտ արևելեան մեծ հարցի մի կարևոր և անբաժան մասը:

Արդ՝ 200 տարիների ընթացքում Ռուսաստանին աջողվեց լուծել արևելեան հարցի որոշ մասերը. նա ազատեց Սերբիան, Չեռնոգորիան, Բուլղարիան՝ թիւրքական լծից, բայց հարցի բունը, կռճը լուծել նա չը կարողացաւ. իսկ հարցի բունը, կռճը, արմատը՝ թիւրքական տիրապետութեան ջնջումն է:

Թիւրքական տիրապետութիւնը Եւրոպայում գրեթէ ջնջված է. միայն Կ. Պոլիսն է, որ իր մի փոքրիկ շրջակայքով մնում է թիւրքերի ձեռքում: Բայց Եւրոպան միշտ այն ծրագրով էր գործում, որ եթէ թիւրքերի տիրապետութիւնը Եւրոպայում վերջանայ, նրանք կարողանան շարունակել այդ տիրապետութիւնը Փոքր-Ասիայում: Այդ դէպքում թշուառ Հայաստանը և երիցս գժբաղդ հայ ժողովուրդը դարձեալ դատապարտվում էր մնալ թիւրքական դաժան լծի ներքոյ: Միայն Ռուսաստանն էր, որ աշխատեց թէ 1877—78 թ. և թէ վերջին տարիները բարուքել հայերի դրութիւնը, եթէ չազատելով նրանց բոլորովին թիւրքական տիրապետութիւնից, գէթ մեղմացնելով այդ տիրապետութեան ազդեցութիւնը լայն րէֆօրմներով եւրոպական կամ ռուսական կոնտրոլի ներքոյ:

Եւ ահա այսօր հասել է ժամը, որ Ռուսաստանը կարողանայ լուծել արևելեան հարցը և նրա հետ հայկական հարցը, այսինքն վերջ դնել օսմ. տիրապետութեանը Եւրոպայում և Փոքր-Ասիայում: Խնդրի այդ տեսակ լուծման մէջ համաձայն են այժմ Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան: Եւ մեղաւորը ինքն Թիւրքիան է, որ իր խելագար վարմունքով արագացրեց այդ լուծումը:

Այլ ևս փրկութիւն չը կայ Թիւրքիայի համար. Նրա կործանումը, քայքայումը անխուսափելի է: Թիւրքահայաստանը պէտք է ազատվի օսմանեան լծից. և նա կազատվի. հայ ազգը Թիւրքիայում կը գտնի իր ազատութիւնը, շնորհիւ ռուսական զէնքի, և հայոց հարցը կը լուծվի նրանով, որ թիւրքական տիրապետութիւնը Հայաստանում կը չքանայ:

Բայց այդ ամենը չէ կատարվելու հեշտութեամբ. երկարատև և ծանր զոհաբերութիւններ են պէտք լինելու, ահագին վտանգներ են առաջ գալու: Եւ այդ ամենին պէտք է դիմանայ, դիմանալու կարող ունենայ հայ ժողովուրդը:

Արդ, այն ժամին, երբ վճռվում է մեր պատմական մեծ դատը, մեր դարաւոր դատը, ինչ վարմունք պէտք է ունենանք մենք հայերս ազգովին: Մեր խօսքը՝ ռուսահայերի մասին է. ինչպէս մի քանի անգամ ասել ենք, այսօր ևս կրկնում ենք, որ մենք ի նկատի չը պէտք է ունենանք թիւրքահայերին, որոնց դրութիւնը, ինչպէս ճիշդ նկատում է ռուս լրագիրներից մէկը, շատ ծանր է և որոնցից պահանջվում է մեծ տակտ: Թիւրքահայերը գտնվում են տրագիկական դրութեան մէջ. նրանց սիրտը, նրանց համակրութիւնը, իբրև տանջված և չարչարված ժողովուրդ, անշուշտ, ազատութիւն բերողների կողմն է, բայց նրանք, իբրև թիւրքահպատակներ, ստիպված են կռուել իրանց ազատարարների դէմ:

Մեր խօսքը ռուսահայերի մասին է. իսկ թէ, նրանք ինչ պէտք է անեն ներկայ պատմական ամենախոշոր րոպէում, այդ մասին կը խօսենք վաղը:

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԶՕՐԱԲԱՆԱԿԻ ՇՏԱԲԻ ԿՈՂՄԻՑ

Կովկասեան զօրաբանակի գլխաւոր հրամանատարի շտաբի կողմից յայտարարվում է պաշտօնապէս.

Հոկտեմբերի 21-ին, ցերեկվայ ժամը 1-ին, մեր քաջարի զօրքերը վերցրին Բայազէդը:

—

Մեր զօրքերը մտան Թիւրքիա, տապալեցին թիւրքերի առաջապահ մասերը և կռւով վերցրին Զվին, Կարաքիլիսէ, Ախտա, Դուտախ, Կորուն, Միսուն և Արծափ գիւղերը: Թիւրքերը նահանջում են կորուստներով և սպանվածներին թողնելով:

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
20—21 հոկտեմբերի

ԲԱԳՈՒ.—Տեղիս մահմեդականները ժողովվելով, թւով մօտ 10,000, գլխաւոր մզկիթում նահանգական ղազիի, հոգևորականութեան, ինտելիգենցիայի և պատուաւոր քաղաքացիների գլխաւորութեամբ, աղօթքներ վերառաքեցին Թագաւոր Կայսրի առողջութեան ու միակ հայրենիք՝ Ռուսաստանի բոլոր թշնամիների վրա յաղթութիւն տանելու համար: Նրանք խնդրեցին հեռագրով փոխարքային առ ոտս պաշտեցեալ Միապետի արկանել հաւատարմութեան զգացմունքներ, պատրաստակամութիւն՝ զոհաբերելու իրանց կեանքն ու գոյքը հայրենիքի՝ Ռուսաստանի պաշտպանութեան համար ընդդէմ թշնամիների և նոր թշնամի Թիւրքիայի, որ իր դաւաճանական յարձակմամբ, գերմանացի և աւստրիացի բարբարոսների հետ դաշն կապած, բոլոր ռուսական մահմեդականների մէջ առաջ բերեց խորին զայրոյթ ու հաւատ առ յաղթութիւնը՝ միակ հայրենիք Ռուսաստանի բոլոր զաւակների աջակցութեամբ:

ԱՄՍՏԵՐԴԱՄ.—Կ. Պոլսից ստացված հեռագիրը յայտնում է, որ անգլօ-ֆրանսիական նաւատորմը, ճշգրիտ տեղեկութիւնների համաձայն, հոկտ. 19-ին մտել է Զեսմէնի նաւահանգիստը: Այդտեղ կանգնած թիւրքական «Բուրաքքէպա» փոքր ռազմանաւը ջրասուզել է նաւահանգստում գտնվող թիւրքաց «Կինալի» շոգենաւին: Յետոյ նաւապետը պայթեցրել է ռազմանաւը, որպէս զի դաշնակից նաւատորմի ձեռքը չընկնէ:

ՀՌՈՄ.—Ֆրանսիական դեսպանատան տեղեկութիւնների համաձայն, Սոֆիայի կառավարութիւնը իրազեկ է արել ֆրանսիական կառավարութեանը, թէ Բուլղարիան բնաւ մտադիր չէ աջակցութիւն ցոյց տալ Թիւրքիային:

ԼՈՆԴՈՆ.—Մեծ վէզիրը երէկ ներողութիւն խնդրեց Սև-ծովում տեղի ունեցածի համար: Դիւանագիտական աղբիւրներից յայտնում են, որ Թիւրքիայի տուած բացատրութիւնների բովանդակութիւնը դեռ հրատարակված չէ: Այնուամենայնիւ թիւրքաց կառավարութեան բացատրութիւնները կընդունվեն միայն այն պայմանով, եթէ նա ներկայացնէ երաշխիքներ և յատուցանէ յարձակման պատճառով առաջ եկած վնասները:

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ.—Կ. Պոլսից տեղեկացնում են, որ հեռագրաթելը Օդեսսայի և Կ. Պոլսի միջև կտրված է: Արտասահմանի հետ հեռագրական կապը պահպանվում է գերմանական գծով Կոնստանցայի և Սիրաւ կղզու վրայով:

Ռուսական բանկը, զանազան ռուսական հաստատութիւններ, նաև մեծ թւով ռուսական վանքեր փակվեցին:

Սերբիական դեսպանը այսօր մեկնում է Կ. Պոլսից:

ՍԱՐԱՏՕՎ.—Մզկիթում բազմաթիւ մահմեդական աղօթողների ներկայութեամբ կատարվեց մաղթանք ռուսական զէնքին յաղթութիւն տալու և թիւրքերի պարտութեան մասին.

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մայրաքաղաքի մամուլի մի քանի պարբերական հրատարակութիւններում լոյս տեսան հեռագրական թղթակցութիւններ Կ. Պոլսից, որոնք պաշտօնական «Թանինի» խօսքերով յայտնեցին, թէ իբր Կովկասի փոխարքան կոչ է հրատարակել հայերին, լոյս յայտնելով թէ՝ նրանք կը միանան Ցարի հովանու ներքոյ, և որ այդ կոչը իբր թէ նպատակ ունի ազդել գլխաւորապէս օսմանահպատակ հայերի լոյալութեան վրա: Կովկասի փոխարքան կտրուկ կերպով հերքում է այդ տեսակ կոչի գոյութիւնը:

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
21 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Պաշտօնական: Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

«Արևելա-պրուսական զօրաճակատում գերմանացիք ամենաուժեղ դիմել են ինքնապաշտպանութեան, իսկ մեր զօրքերը մի քանի տեղում առաջացել են, ձեռք ձգելով երկու թնդանօթ, պրոժեկտոր և գերիներ:

«Վիսլայի այն կողմը, Պիլիցայից դէպի հիւսիս-արևմուտք մեր զօրքերն առանց խոշոր ընդհարումների առաջացան, գրաւելով Շադէկը, Լասկը և Բոսպրժաւն: Բաղօշիցէ-Կէլցէի զօրաճակատում թշնամին նահանջում է Վլօշչօվի և Անդրէևվի ուղղութեամբ: Կէլցից դէպի հարաւ-արևելք աւստրիացիք փորձեցին ցոյց տալ աւելի յամառ դիմադրութիւն, բայց զօրաճակատի մէկ մասում ցիրուցան արվեցին, կորցնելով երեք թնդանօթ, հինգ գնդացիր ու մօտ 1500 գերիներ: Նրանք տակաւին դիմադրում են Օպատօվկա գետի ստորին հոսանքի մօտ:

«Ստորին Սանի վրա զօրքերը շարունակում են անցնել գետի ձախ ափով, գրաւեցին Մայլցէ գիւղը և մասամբ Բաղվատովից դէպի հիւսիս ընկած ամուր դիրքերը, գրաւելով երկու թնդանօթ ու գնդացիր: Նիզկօյի շրջանում շարունակվում է յամառ կռիւ. մենք այստեղ ձեռք ձգեցինք մօտ 2500 գերուն»:

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պարզվեց, որ գեներալ Գինդէնբուրգի շտաբը գտնվում է Կօնիցում. հոկտ. 12-ին գեներալ Գինդէնբուրգը պրուսական և սաքսոնական պրինցների հետ մեկնեց Վլօշչօվ և Չէնստօխօվ:

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ)
20—21 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն.
«Օրվայ մէջ գերմանացիների գործած յար-

ձակումները Հիւսիսային ծովի և Ուազի մէջև աւելի թոյլ էին, քան երէկ։ Բելգիայում մենք առաջացել ենք Դիկսմիւդէի մօտից մինչև Գէլլիւվէլտ։ Մնացած դիրքերը մենք պահեցինք։ Էնի շրջանում գերմանացիք անօգուտ յախուռն արշաւի դիմեցին Ֆրեյանլիանուրի և Բալիի միջև։

ՀԱՎՐ.—Համաձայն բելգիական գլխաւոր շտաբի հաղորդագրութեան, գերմանացիք այլ ևս ոչ մի գործունէութիւն ցոյց չեն տալիս Իզէր գետի զօրաճակատում։ Ըստ երևոյթին, գերմանացիք հեռացել են բոլորովին այդ գետի ձախ ափը։ Հեղեղումը շարունակւում է. սակայն թշնամու ձգած շարժական կամուրջները դեռ մնում են։ Դաշնակիցները շարունակում են դանդաղ առաջանալ գերմանական երկրորդ զօրաբանակի աջ զօրաթևի դէմ։ Վերջերս Լիս գետն անցան մեծաքանակ գերմանական ուժեր, որոնք կենտրոնացել են Գէլլիւվէլտ-Ուօլբէկ-Դէշէմօն զօրաճակատում։ Նրանց նպատակն է ձեռք ձգել Իպր քաղաքը, որի գրաւումը գերմանացիք շատ կարևոր են գտնում։ Վիլհէլմ կայսրը շուտով գալու է Հարաւային Ֆլանդրիա, որպիսի հանգամանքը ևս ցոյց է տալիս, որ գերմանացիք իրանց գլխաւոր ուժերն ուղղում են Իպրի և Լիսի դէմ։ Երէկ և այսօր դաշնակիցները վանեցին թշնամու յարձակումները։

ՊԱՐԻԶ.—Բելգիայից ստացված տեղեկութիւնների համաձայն, վերջերս հաղորդվեց, ի միջի այլոց, որ Վիւրտէնբէրգի դքսի գլխաւոր բանակի շտաբը գտնվում է Տիէլտում, աւելի ճիշդ՝ Տիէլտի ամրոցում։ Այդ առիթով մի խումբ օդագնացներ, զինված ռումբերով, հոկտ. 19-ին հրաման ստացան երևան հանել և ռմբակոծել այդ շտաբը։ Դատելով օդագնացների տեղեկութիւններից, նրանք աջողութեամբ կատարեցին յանձնարարութիւնը՝ մեծ խուճապ ձգելով Տիէլտի շրջակայքում։

Պաշտօնական հաղորդագրութիւն. «Մեր ձախ զօրաթևում թշնամին, ըստ երևոյթին, բոլորովին հեռացել է Իզէր գետի ձախ ափից։ Դիկսմիւդէից ներքև դաշնակից զօրքերի հետախոյզ խմբերը առանց առանձին դիմադրութեան գրաւել են նորից Իզէրի գետանցքները։ Դիկսմիւդէից դէպի հարաւ և Գէլլիւվէլտի ուղղութեամբ մենք բաւականին առաջ ենք գնացել Լիսից դէպի հիւսիս։ Չը նայած թշնամու խոշոր ուժերի յարձակումներին մեր զօրաճակատի վրա, մենք ամենուրեք մնացինք մեր դիրքերում։ Արրասի և Լիէվէնուայի դէմ հակառակորդի յարձակումները վանվեցին։ Մեր տեղադրութեան կենտրոնում՝ Էն գետի շրջանում, և Էգլ անտառից դէպի արևելք մենք մասամբ առաջացել ենք Վայէից դէպի արևելք։ Վերջին տեղեկութիւնների համաձայն, Շավօն և Սուպիր գիւղերից դէպի հիւսիս մեր զօրամասերը ստիպված էին փոքր ինչ նահանջել հովիտը և արևելեան ուղղութեամբ։ Մենք մնացինք մեր դիրքերում Բուրգից և Կոմպիէնից վերև՝ աջ ափին։ Օրվայ ընթացքում տեղի ունեցաւ ուժեղ թնդանօթաձգութիւն Ռէյմսի և Մասսի միջև, նաև Մասսի աջ ափին։ Գերմանացիք նոր ջանքեր են գործ դնում առաջանալ Արգօնի անտառում, բայց մենք չէզոքացնում ենք այդ ջանքերը։ Մենք շարունակեցինք մեր յարձակումը Պօնտա-Մուսօնից դէպի հիւսիս-արևմուտք։ Մեր աջ զօրաճակատում տեղի ունեցան մի քանի երկրորդական կռիւներ Սէյլ գետի ուղղութեամբ»։

ԱԼԲԱՆ-ՉԵՐՆՈԳՈՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 հոկտեմբերի

ՑԵՏԻՆԻԷ.—«Պրես-Բիւրօն» յայտնում է, որ զինված ալբաններ, ունենալով երկու թնդանօթ, Բայրամ-Մզուրի և Իսսա Բոլէտինացի առաջնորդութեամբ, որոնք հագել էին աւստրիացի օֆիցէրների զգեստ, յարձակվեցին չերնոգորցիների վրա Դիակովիցայի կողմից։ Որովհետև այդ տեղում չերնոգորցիք քիչ զօրք ունէին, ուստի ալբանացիք մտան չերնոգորական երկրի ներսը. սակայն, օգնութեան եկած չերնոգոր զօրքերը ալբաններին ջարդեցին, խլեցին նրանցից 2 թնդանօթ և դուրս քշեցին նրանց երկրից։ Կռւի տեղում ալբանները թողին 150 սպանված։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

22 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Լլօյդին տեղեկացնում են Բարիից, որ գերմանական «Էզլիօն» շոգենաւը այնտեղ ափ հանեց բելգիական «Վանդիկ» շոգենաւի և անգլիական «Հերցդոլ» ու «Գլանտօն» շոգենաւերի նաւաստիներին և ճանապարհորդներին։ Ցիշեալ շոգենաւերին ձեռք է ձգել գերմանական մի յածանաւ Կարլսրուհէի մօտ։

ՊԱՏԵՐԱԶՄ ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 հոկտեմբերի

ՏՕԿԻՕ.—Ցինդաօյի ընդհանուր ռմբակոծութիւնը աջող է ընթանում։ Մի քանի բերդերից այլևս չեն պատասխանում։

«Ստանդարտ» նաւթապահեստներում սկըսված հրդեհը ծխով ծածկեց ամբողջ քաղաքը և մի քանի ամրութիւններ, արգելք լինելով թնդանօթաձգութեան։

ՉԻՖՈՒ.—Մօլտկէ Իլդիս և Բիսմարկ բերդերի դէմ դրվեցին նոր մարտկոցներ, էլեքտրական արգելիչ խութեր և փորվել են խոր խրամատներ։ Ճապօնացիք գերել են երկու աւտոմոբիլով զինւորներ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

21 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Թագաւոր Կայսրի գահակալութեան օրը մայրաքաղաքը զարդարված էր դրօշակներով. բոլոր եկեղեցիներում մատուցվեցին պատարագներ։ Կազանի տաճարում պատարագը մատուցեցին սինօդի անդամները միտրօպոլիտի գլխաւորութեամբ և ներկայութեամբ մինիստրների, պետական բարձրաստիճան անձանց, գեներալիտէտի և այլն։

Պ. Հ. Գ. պետութեան զանազան քաղաքներից ստացւ հեռագիրներ կատարված մաղթանքների ու զօրահանդէսների մասին։ Շատ քաղաքներում տեղի են ունեցել հայրենասիրական խանդավառ ցոյցեր ուսանող երիտասարդութեան մասնակցութեամբ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

21—22 հոկտեմբերի

ԲՕՐԴՕ.—Պուանկարէն ժամանեց Դիւնկէրկ, ուր կայացաւ երկարատև խորհրդակցութիւն Բրօկվիլլի և Կիտչեների հետ։ Այստեղից Պուանկարէն մեկնեց ողջունելու Բելգիայի յանձին Ալբէրտ թագաւորի և բելգիական զօրքի։ Թագաւորը դիմաւորեց Պուանկարէին սահմանում։ Երկուսով դիմեցին թագաւորական ռեզիդենցիան, ուր պրեզիդենտը ողջունեց թագուհուն։ Ցետոյ թագաւորը և Պուանկարէն անցան Ֆիւրնէս քաղաքը, որ միայն առաջի օրն էր ենթարկվել սոսկալի ռմբակոծութեան։ Զօրքին դիտելուց և սրտագին զրոյցից յետոյ պրեզիդենտը մեկնեց Ֆրանսիա։

Պուանկարէն Միլլէրանի և Ռիբօի ուղեկցութեամբ կիրակի օրը այցելեց աւտօմօբիլով Դիւնկէրկ։ Ռիբօն դիմեց Պա-դը-Կալէ։ Պուանկարէն և Միլլէրանը Դիւնկէրկում տեսակցեցին Բրօկվիլլի և Կիտչեների հետ։ Պուանկարէն և երեք զինւորական մինիստրները երկարատև խորհրդակցութիւն ունեցան գեներալ Ժօֆֆրի մասնակցութեամբ։ Մի անգամ ևս պարզվեց, որ լիակատար համաձայնութիւն գոյութիւն ունի ներկայի և ապագայի գործունէութեան համար դաշնակից զօրքերի երեք գլխաւոր շտաբների միջև։ Պրեզիդենտի մօտ կայացաւ նախաճաշ Բրօկվիլլի և Կիտչեների ներկայութեամբ։ Գիշերը Կիտչեները վերադարձաւ Անգլիա։ Պուանկարէն Միլլէրանի, Ժօֆֆրի և գեներալ Դիւպարժի ուղեկցութեամբ երկուշաբթի օրը մեկնեց Ալբէրտ թագաւորի մօտ, որ Պուանկարէին հրաժեշտ տալիս վստահեցրեց նրան իր անխախտ բարեկամութեան մէջ։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց մեկնել Ցարսկօէ Սէլօյից գործող բանակը։ Նորին Մեծութեանը հրաժեշտ տուին Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնան, Գահաժառանգը, Օգոստափառ Դուստրները, Պալատի մինիստրը և այլ պաշտօնեաներ։ Թագաւոր Կայսրին ուղեկցում են զինւորական մինիստրը, պալատական բերդապետը, գեն.-մայօր իշխ. Դօլգօրուկօվը, ֆլիգէլ-ադիւտանտ Դրենտէլնը, Նարիշկինը, Սաբլինը և պալատական վիրաբոյժ Ֆէօդօրօվը։ Գնացքը գտնվում է գնդապետ Գէրարդիի հսկողութեան տակ։

ԹԱՒՐԻԶ.—Տեղում բնակվող գերմանացիներին, ռուսների դէմ ագիտացիա մղելու պատճառով, առաջարկվեց հեռանալ Ատրպատականից։

ՎԱՐՇԱՎԱ.—Լօձի զինւորական իշխանութիւնները արգելեցին ոգելից ըմպելիքների վաճառումը։ Արգելված է փողոց ելնել երեկոյեան ժամը 9-ից յետոյ։ Քաղաքում հիմնվել է հասարակական աշխատանքների մասնաժողով։

Կալիշից տեղեկացնում են, որ քաղաքի քանի մի զերծ մնացած փողոցները ամայացել են։ 50,000 բնակչից քաղաքում մնացել են մի քանի հազար հոգի։ Ֆաբրիկաները չեն գործում, սահմանը մասնաւոր մարդկանց համար փակ է։ Գերմանացիք տուրք են դրել անշարժ գոյքի ու առևտրի վրա։

ՀՌՕՄ.—Աւստրօ-ունգարական դեսպանատունը յայտնում է, որ Մաքսիմ Կովալևսկին այժմ ստիպողաբար բնակվում է Կարլսբադում և պարտաւոր է շաբաթը մի անգամ ներկայանալ ոստիկանատուն։

«Տրիբունան» հաղորդում է, որ Ռադօսլավօվը վստահեցրեց եռեակ համաձայնութեան մեծ պետութիւններին, որ Բոլգարիան մտադիր է չէզոք մնալ, և միայն այն դէպքում, երբ թիւրքերը կը փորձեն անցնել բոլգարական սահմանը, Բոլգարիան կարող է զէնքը ձեռին հանդէս գալ ընդդէմ Թիւրքիայի։

ՍՕՖԻԱ.—Ազգային ժողովում սօցիալիստների պարագլուխը դիմեց Ռադօսլավօվին՝ հարցնելով կառավարական ընդհանուր քաղաքականութեան մասին, ի նկատի ունենալով եւրօպական պատերազմը։ Ռադօսլավօվը խնդրեց մի քանի օր տալ պատասխանի համար։

ԼՕՆԴՕՆ.—«Դէյլի-Տելէգրաֆը» յայտնում է, որ շուտով բաց է թողնվելու 200 միլիոն ֆունտի նոր 4%-ային զինւորական փոխառութիւն, որ ծածկվելու է 10 տարում։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ցարգրադից (Կ. Պոլիս) հաղորդում են Բուխարէստի վրայով. «Այստեղ ձերբակալվեց հայ կուսակցութեան յայտնի գործիչ Ռաժակը, որ մեղադրվում է Ռուսաստանի հետ յարաբերութիւն ունենալու մէջ»։

◆ Ռուշչուկ և Սիլիստրիա են եկել թիւրքաց զօրքից փախած զինւորները։

◆ Կ. Պոլսի եւրօպական մասը խաղաղ է։ Ստամբուլում և Ղալաթիայում հայրենասիրական ցոյցեր են կատարվում։

◆ Կ. Պոլիս է վերադարձել Հակկը-փաշան, որ գնացել էր Բեռլին այն միսսիայով, որ Գերմանիան չը պնդի Թիւրքիայի հանդէս գալու վրա։ Իր միսսիայի անաջողութեան դէպքում Հակկը-փաշային թոյլատրված է եղել համաձայնել գերմանական պահանջների հետ, սակայն այն պայմանով, որ գերմանական օֆիցէրները ենթարկվեն թիւրքաց պետերին և գերմանական զօրքի թիւը աւելացնեն արևելեան սահմանում։ Հակկը-փաշայի վերադառնալով մինիստրների խորհրդում պատերազմի հարցը վճռվեց դրականապէս։

◆ Բեռլինի թիւրքաց դեսպանը մի ժուռնալիստի հետ խօսելիս ասել է, որ թիւրք-գերմանական համակրութիւնները շատ ուժեղ են։ Երկու ժողովուրդները միացած են ներքին կապով։

◆ Բեռլինում, թիւրքաց դեսպանատան առաջ տեղի ունեցաւ ցոյց։ Դեսպանը ողջունեց ցուցարարներին ճառով։ Բեռլինում չեն կասկածում, որ Ցունաստանը, Ռումինիան և Բոլգարիան կը նետվեն պատերազմի գիրկը։

◆ Պարզվում է, որ Գերմանիան չէ կատարում Թիւրքիային տուած իր խոստումներից շատերը։

◆ «Веч. Вр.»-ում Ան. Քալանթար խօսում է հայերի հայրենասիրական տրամադրութեան մասին և թիւրքերի անտանելի լծի մասին։ Թիւրքիայի հետ սկսված պատերազմը հաւատ է ներշնչում հայերին, թէ վերջապէս կիրագործվի հայերի վաղեմի բաղձանքը, այսինքն Հայաստանը կը միացվի Ռուսաստանին։

◆ Կ. Պոլսից հեռագրում են, որ «Մ. և Ա.» կոմիտէտը խզել է իր բոլոր կապերը «Դաշնակցութիւն» կուսակցութեան հետ։ Նոյնպիսի կարգադրութիւն ուղարկված է գաւառները։

◆ Հայաստանում ամենուրեք սկսվել են քիւրդերի ասպատակութիւնները։ Հայ ազգաբնակութիւնը անպաշտպան է ու ահաբեկված։ Սկսվել են հայերի գիւղերի թալանը և մարդկանց սպանութիւնները։

◆ Ստրուվէն «Б. В.»-ում գրում է, որ արևելեան հարցի լուծումը հնարաւոր է Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի շահերի լիակատար համաձայնութեամբ։ Ռուսաստանին միայն ցանկալի է անգլիական վերահսկողութեան ուժեղացումը Եգիպտոսում և ոչինչ հարկաւոր չէ Միջագետքում, ոչ էլ հարաւային Պարսկաստանում։ Թիւրքաց հարցի լուծմամբ կը լուծվեն մի շարք ուրիշ հարցեր, օրինակ Լէվանտինի հարցը յօգուտ Ֆրանսիայի, որով Սիրիան կենթարկվի ֆրանսիական ազդեցութեանը։

◆ Պետրօգրադի թիւրքաց դեսպանը իբր թէ դէմ լինելով պատերազմին չէ վերադառնալու Կ. Պոլիս, այլ մնալու է Հաագայում։

◆ Կ. Պոլսից մասնաւոր հեռագիր է ստացվել, որ այնտեղ սկսվել են անկարգութիւններ։ Ցեղափոխութիւնն անխուսափելի է համարվում։

◆ Կ. Պոլսից հեռագրում են. «Մեծ վէզիրը և ֆինանսների մինիստրը, դէմ լինելով պատերազմին, հրաժարական տուին։ Վէզիր նշանակվեց Թալէաթ-բէյը։ Մեծ վէզիրը հրաժարականից յետոյ այցելեց դաշնակից մեծ պետութիւնների դեսպաններին և ցաւակցութիւն յայտնեց նրանց»։

◆ Սօֆիայում ստացվում են բազմաթիւ բողոքներ Բոլգարիայի չէզոքութեան դէմ։ Շատ ուսումնականներ և պրօֆեսորներ բանաձևեր են ընդունում բոլգար կառավարութեան տակտիկայի դէմ և պահանջում են, որպէսզի Բոլգարիան անմիջապէս միանայ Ռուսաստանին։ Չէզոքութիւնը անթոյլատրելի է։ Մերժումը կարող է առաջ բերել դիւանագիտական յարաբերութիւնների խզումն Ռուսաստանի և Բոլգարիայի միջև։

◆ Մոսկվայի հայ երիտասարդները պատրաստվում են Կովկաս գալ՝ թիւրք-ռուսական պատերազմին մասնակցելու համար իբրև կամաւորներ։

◆ Իգդիրից «К. Сл.»-ի թղթակիցը հեռագրում է. «Թադևոսեանի որդին՝ պրոգիմնազիայի նախակրթարանի աշակերտ և նրա դասընկերը, որոնք հայրենասիրական զգացմունքից դրդված Երևանում մտել էին զօրքի մէջ իբրև կամաւոր զինւորներ, առաջաւոր զօրախմբերին փամփուշտ հասցնելու նպատակով եկան սայլով Իգդիր։ Հայրը, հասնելով պատանի հերոս-զինւորներին, ոյժով ետ տարաւ։

«Կամաւորների թիւը շատ մեծ է։ Շատերը, հնարաւորութիւն չունենալով ընկնել կամաւորների շարքը, խառնվում են զօրքերի հետ և ճանապարհին զինավարժութեամբ են զբաղվում։

«Տեղի են ունենում ընդհարումներ Բայազէդի շրջակայքում»։

◆ «Б. В.»-ին հեռագրում են Աթէնքից, որ տեղական մամուլը միաբերան պահանջում է, որպէսզի Ցունաստանը հանդէս գայ թիւրքերի դէմ։

◆ «Курьеръ»-ին հեռագրում են Պարիզից, որ ամերիկեան երկու ռազմանաւ գտնվում են թիւրքաց ջրերում՝ ամերիկեան հպատակներին թիւրք խուժանի ջարդից պաշտպանելու համար։

◆ «Н. Вр.»-ն գրում է, որ տեղեկութիւններ կան, թէ վերջերս Էնվէր-փաշան գերմանական դեսպան Վագենհէյմի միջոցով ստացել է մօտ 5 միլիոն ֆրանկ իր անձնական տրամադրութեան տակ։ Այդ գումարը գործադրվելու էր զանազան նպատակներով և Պարսկաստան էմիսարներ ուղարկելու համար՝ տեղական ազգաբնակութիւնը Ռուսաստանի դէմ գրգռելու նպատակով։

◆ Կօպէնհագէնից հեռագրում են, որ, Հռոմից ստացված տեղեկութիւնների համաձայն, Իտալիայում նպաստաւոր տրամադրութիւն է տիրում Իտալիայի ակտիվ հանդէս գալու մասին։

◆ Աւստրիացիների խորամանկ փորձը՝ անցնել Պերեմիշլի ետևը՝ չաջողվեց։ Աւստրիացիները շրջապատվեցին և ջարդվեցին։

ՋՈՒՐ ԵՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԱՒԵՐԸ

Բիսմարկի յաւակնոտ ճուտերը, խրախուսված՝ թիւրքերին և պարսիկներին իրանց խարդաւանանքների ծուղակի մէջ ձգելուց, վերջերս ջանքեր չէին խնայում թիւրքահայերի և պարսկահայերի միտքն էլ պղտորել դէպի ռուս կառավարութիւնն ու ժողովուրդը։

Չը բաւականանալով Համիդի միջոցով 200,000 հայ կոտորել տալով, թող փչելու համար՝ միլիօնաւոր հայ որբերից մի քանի տասնեակ հաւաքելով և խնամելով, Բեռլինում հայ-գերմանական ինչ-որ կոմիտէտներ կազմել տալով և նրանց միջոցով հայ ժողովրդին ազատութիւն, ինքնավարութիւն, գուցէ և անկախ թագաւորութիւն խոստանալով՝ մի նոր Վիլգով միասին, վերջերս էլ սկսել էր իր ագէնտների միջոցով թռուցիկներ տարածել, գրգռելու հայերին ռուսների դէմ։

Դարեր շարունակ Մեծ Ռուսաստանը իր հարազատ զաւակների 100,000-աւորների արիւնով փրկել է քրիստոնեայ մանր ազգութիւններին և այսօր էլ Սպիտակ Ցարը անձամբ մտել է արեան ծովը—իր միլիօնաւոր զաւակներով—փոքրիկ Սերբիայի պատճառով։ Ամենատխմար հայն անգամ գիտէ այս։ Հայը գիտէ նաև այն, որ ազատութեան և անկախութեան արշալոյս ծագելու է իրան համար Մեծազօր Ռուսաստանի շնորհիւ։ Եւ այդ անհուն սէրն ու հաւատն է, որ հայ մեծին ու փոքրին, ծերին ու երիտասարդին զինել է վառ եռանդով և ոգևորութեամբ դէպի ներկայ պատերազմը. ամենքն էլ պատրաստ են ուրախութեամբ զոհաբերելու և՛ կարողութիւն, և՛ կեանք, և՛ ամեն ինչ, օգնելու Ռուսաստանին ընդդէմ մարդախոշոշ Գերմանիայի։

Ոչ մի թռուցիկ, ոչ մի յորդոր չի կարող խախտել հայի հաւատն ու վստահութիւնը դէպի իր «քեռի» Ռուսաստանը... Հայ պառաւ տատիկներն ու պապիկներն իսկ վրդովվում են այսօր, տեսնելով Բոլգարիայի կասկածելի տատանումը, և համոզված են, որ շուտով հասնելու է այն երջանիկ օրը, երբ ազատ Հայաստանում կը սահմանվի ազգային ամենամեծ տօնը, ազատարար Ռուսաստանի արձանի բացումը Վանում կամ Էրզրումում։

Եւ հայը բաղդաւոր կը լինի այն օրը, երբ ինքնակամ կերպով իր բաղդի անիւը կը պտտի դէպի այն կողմը, որ կողմը թեքված կը լինի իր ազատարարի բաղդը. կը խնդայ և լաց կը լինի նրա հետ միասին... Այս համոզումն, այս հաւատն ու ակնկալութիւնն ունի հայը ներկայումս, աշխարհիս ո՛ր անկիւնումն էլ լինի նա... Թող տեւտոնեան խարդաւանքները հայերէն թռուցիկներով հեղեղեն ոչ միայն Պարսկաստանն ու Թիւրքիան, այլ նոյն իսկ Կովկասը. այդ թռուցիկները միայն բորբոքել կարող են հայութեան սէրն ու հաւատը դէպի Ռուսաստան։

Մար

Ռաշտ

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

Մինչև այժմ տեղեկութիւններ կան միայն Ասիական Թիւրքիայի դէմ սկսված պատերազմական գործողութիւնների մասին։

Արդէն 6-րդ օրն է այսօր, սկսեալ հոկտ. 18-ի հրամանից, որ այդ գործողութիւնները սկսվել են։

Ռուսական զօրքերը Կարսի կողմից արդէն վերցրել են ռուս-թիւրքական սահմանագլխի վրա գտնվող Ջիվին կարևոր բերդը, յայտնի նրանով, որ 1877 թ. այդտեղ մեծ ճակատամարտ տեղի ունեցաւ Իսմայիլ փաշայի և ռուսական զօրքերի միջև, իսկ 1903 թ. հայ յեղափոխականները գրաւեցին։ Այդ տեղից ճանապարհը բացվում է դէպի Հասան-Ղալէ և Էրզրում։

Իգդիրի կողմից ռուսական զօրքերը գրաւել են Միսուն, Կօրուն, Արծափ, Դուտախ գիւղերը, ինչպէս և Բայազէդ բերդաքաղաքը։

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՋԵՐԲԱԿԱԼՈՒՄԸ

«Մշակի» խմբագրութիւնը ստացաւ հետևեալ հեռագիրները.

I

Իւրիւմսկի գործար. (Եկատ. ն.), 20 հոկտ.

Մեզ, բոլոր թիւրքահպատակ հայերիս, ձերբակալել են. աղերսում ենք միջնորդել ազատել մեզ ամենքիս. կալանաւորութիւնը սպառնում է մեր գործերին ամբողջական քայքայումն. գործերը մնացել են անտէր։

Գէորգեան

II

Բախչիսարայ, 21 հոկտ.

Թիւրքահպատակ հայերին աքսորում են. խնդրում ենք միջնորդել թողնել։

Իսկանդարեան քահ.

III

Խարբին, 19 հոկտ.

Թիւրքահպատակ հայերը բանտարկված են. խնդրում ենք բացատրել, թէ ինչ միջոցներ են ձեռք առնվում նրանց վիճակը թեթևացնելու համար. հեռագրել ենք և Կաթողիկոսին։

Կարախանեան

«Մշակը» դեռ երկու ամիս առաջ արծարծեց այն հարցը, որ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել և միջնորդել կառավարութեան առաջ, որպէս զի Թիւրքիայի դէմ պատերազմ ծագելու դէպքում թիւրքահայերը, իբրև օսմանեան հպատակներ, չը բանտարկվեն և չաքսորվեն, քանի որ կայ որոշ օրէնք, որի հիման վրա այն պետութեան հպատակները, որի դէմ պատերազմ է յայտարարված, բանտարկվում կամ աքսորվում են։ Դժբաղդաբար, ինչպէս երևում է, այդ միջոցները ձեռք չեն առնվել և այժմ օրէնքը գործադրվում է։ Մենք համոզված ենք, որ Կովկասի փոխարքան չի զլանայ իր միջնորդութիւնը ի նպաստ թիւրքահայերի։

ԲԱՅԱԶԻԴ

Արդէն պաշտօնական տեղեկութիւն կայ Բայազէդի գրաւման մասին ռուսաց զօրքի կողմից, ուստի հարկաւոր ենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել այդ բերդաքաղաքի մասին։

Բայազէդը Թիւրքահայաստանի պատմական և նշանաւոր քաղաքներից մինն է, շինված այնտեղ, ուր հնումն գտնվում էր հայոց Դարոյնք հռչակաւոր բերդը։

Նա գտնվում է ռուսական սահմանից (Իգդիրից) 50 վերստ հեռաւորութեան վրա և կազմում է Բայազէդ գաւառի (Էրզրումի վիլայէթում) գլխաւոր քաղաքը։ Շինված է մի քարալեռի զառիվայրի վրա, նայող խոր անդունդի վրա. ունի գեղեցիկ բերդ և կուսակալի ապարանք մօտ 6000 ոտն. բարձրութեան վրա։ Բայազէդ անունով կոչվում է 15-րդ դարից սկսած։ Նա հռչակվեց իր մէջ տեղի ունեցած շատ պատերազմական դէպքերի և գլխաւորապէս 1877—78 թ. ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ։ 18-րդ դարի կէսին այդ քաղաքում կար 2000 հայ տուն. 1828-ին՝ բնակիչների թիւը 1735 տուն էր հայոց և 310 տուն թիւրքաց։ Այսօր բնակիչների թիւը 2000 է, որից 1200-ը հայ, 669 թիւրք և քիւրդ և 131 զանազան։ Նա շրջապատված է հին պարիսպներով, որոնք սակայն վնասվել են 1840 թ. երկրաշարժից։

Ռուսաց զօրքը արդէն երեք անգամ առել է այս բերդաքաղաքը։ Առաջին անգամ 1828 թ., երբ իշխ. Ճավճավաձէն խորտակեց նրա պարիսպների ներքոյ թիւրքական հեծելազօրքը և ստիպեց բերդի հրամանատար Բահլուլ-փաշային անձնատուր լինել։ Բայց 1829 թ., երբ բերդում գտնվում էր ռուս զօրավար Պոպօվը՝ ունենալով միայն 13 րօտ զինւոր, 500 հայ միլիցիա և 400 կօզակ և 17 թնդանօթ, Վանի փաշան յարձակվեց նրա վրա 14,000 զօրքով, 74 թնդանօթով, բայց ռուսները արիաբար ընդդիմադրեցին մինչև որ Վանի փաշան, իմանալով որ Էրզրումը առնվել է ռուսներից, ետ նահանջեց։ Սակայն երբ հաշտութիւն կնքվեց, Բայազէդը վերադարձվեց Թիւրքիային։

Երկրորդ անգամը ռուսները վերցրին Բայազէդը 1854 թ., բայց Պարիզում հաւաքված դեսպանաժողովը նորից վերադարձրեց նրան Թիւրքիային։

Երրորդ անգամ ռուսները վերցրին Բայազէդը 1877-ին. այդ ժամանակ տեղի ունեցաւ այն հերոսական գործը, որ նկարագրել է Րաֆֆին «Խենթ» վէպի մէջ։ Երբ ռուսները վերցրին բերդը, այդտեղ թողեցին մի փոքր պահակախումբ Պացևիչ փոխգնդապետի հրամանատարութեամբ։ Եւ ահա 1877 թ. յունիսի 4-ին Բայազէդը շրջապատվեց թիւրք և քիւրդ հրոսակախմբերով, թւով 11,000, որոնք պաշարեցին բերդաքաղաքը։ Ամբողջ 22 օր պաշարեալները հերոսական դիմադրութիւն ցոյց տուին, Շտօկվիչ շտաբս-կապիտանի հրամանատարութեամբ (Պացևիչը սպանվել էր), մինչև որ վրա հասաւ հայազգի զօրավար Տէր-Ղուկասեանը իր զօրքով և ազատեց բերդն ու պաշարեալներին։ Սակայն Բեռլինի կոնգրէսը նորից վերադարձրեց Բայազէդը Թիւրքերին։

Հաւատացած ենք, որ այս անգամ գոնէ նա կը մնայ ընդմիշտ ռուսական հովանու ներքոյ։

Բայազէդի գաւառը, սահմանակից Անդրկովկասին և Ատրպատականին, բաժանված է 5 վիճակների—Բայազէդ, Դիադին, Կարա-Քիլիսէ, Ալաշկերտ և Անթապ։ Այդ գաւառում կան 418 գիւղ և 8448 տուն, կամ 52,545 բնակիչ, որից 41,471 մուսուլման և 10,505 հայ ու 568 զանազան։

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԸ

Վերջին ժամանակներս մասղրած, բայց մինչև այժմ, անկասած, կարգի չը բերած, Թիւրքաց զօրաբանակը կազմված պէտք է լինէր 13 կորպուսից։

Դրանցից 9 կորպուս կանգնած են Փոքր-Ասիայում՝ Հալէպում, Անգօրայում, Բաղդադում, Վանում, Դամասկոսում, Մօսուլում, Ջմիւռնիայում, Երզրումում, Երզնկայում։

Այնուհետև երեք կորպուսը գտնվում են Եւրոպայում, այն է՝ Ադրիանուպօլսում, Բուլայիր-Րօդոստոյում և Կ. Պոլսում։

Վերջապէս, 1 կորպուս գտնվում է Արաբիայում և Եմէնում։

VII, XII և XIII կորպուսներում կան 2, իսկ միացեալներում 3-ական դիվիզիա, ընդամենը 36 դիվիզիա, ընդհանուր հաշւով մինչև 500,000 մարդ։

Բայց այս քանակից կարող են դուրս բերվել 400,000 հոգի վատ վարժված պահեստիներ։

Բալկանեան պատերազմը ցոյց տուեց, որ օսմանեան զինւորի բարձր յատկութիւնները, որ այնքան յայտնի էին, ոչինչ են, շնորհիւ վատ կազմակերպութեան։

Թիւրքաց նաւատորմը, բացի «Գեբէնից» և «Բրեսլաուից», կազմված են «Խայրէդդին-Բարբարոսս», «Տորղուտ-րէիս», «Մեսուդիէ» ռազմանաւերից և «Համիդիէ» ու «Մէջիդիէ» մանր յածանաւերից և տասնեակ ականակիրներից։

Թիւրքիայի նաւատորմը իրանից ներկայացնում է կամ բոլորովին հնացած, կամ համեմատաբար նոր, զանազան տիպի և զանազան մեծութեան նաւերի հաւաքոյթ։

ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

«Рус. Вѣд.» լրագիրը, խօսելով հայերի մասին, գրում է.

«Թիւրքահայերի համար ստեղծվել է ծանր դրութիւն. հոգով նրանք կապած են Ռուսաստանին, բայց իբրև Թիւրքահպատակներ՝ պէտք է կռւեն Ռուսաստանի դէմ։ Թիւրքահայերից սպասվում է այժմ շատ մեծ տակտ։ Ռուսահայերը գտնվում են այլ դրութեան մէջ և ջերմօրէն ցանկանում են մասնակցել պատերազմին Թիւրքիայի դէմ»։

«Рус. Слова»-ն իր առաջնորդող յօդուածի մէջ, խօսելով Թիւրքիայի դէմ պատերազմի մասին, ասում է. «Ռուսաստանին վիճակված է քամել արեան բաժակը մինչև վերջը։ Մեր դարաւոր թշնամին ցանկացաւ մաքրել մեզ հետ իր վերջին հաշիւները այն րոպէին, երբ մեծ պատերազմը Միջին Եւրոպայում նոր անցաւ իր զարգացման գագաթնակէտով։ Այս պատերազմը քիչ զոհեր չէ պահանջելու Ռուսաստանից, բայց ռուս ժողովուրդը չի շեղվի ճակատագրից իրան առաջված նոր սխրագործութիւնից։ Մեր առաջ կան մեծ նպատակներ և մեծ ապագայ։ Ռուսաստանը պէտք է վերջապէս ստանայ իր սեփական տան բանալիները, անդառնալի կերպով լուծէ նեղուցների հարցը։ Ռուսաստանը չէ կարող հաշտվել տիեզերական պատրիարքի աքսորման մասին իր 1600-ամեայ բնակավայրից։ Պէտք է ազատել նոյնպէս և սուրբ երկիրը։

«Հասել է ժամը, երբ պէտք է վերադարձնել աշխարհին մշտական անդորրութիւն և ազատել բոլոր այն ազգերը, որոնք հեծում են բաշիբոզուկների լծի տակ։ Հասել է ժամը ազատելու բազմաչարչար հայ ազգը, որ տասնեակ տարիներով իր արեամբ է վճարում Եւրոպայում հաւասարակշռութիւնը պահպանելու փորձի համար։ Մենք պէտք է վերջապէս կատարենք մեր պատմական պարտքը»։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐԸ

Անցեալներում, «Մշակի» № 187-ում և № 205-ում մենք տուինք նոյն վերնագրով տեսութիւններ պատերազմի անցքերի վերաբերեալ, այն, թէ ի՛նչ բան ո՛ր ամսի թւին է կատարվել։ Այդ տեսութիւնները միասին վերցրած՝ վերջը կը կազմեն մի համառօտ, ամփոփ պատմութիւն պատերազմի անցքերի մասին։ Այժմ տալիս ենք այդ միամսեայ տեսութիւնների շարունակութիւնը նոյն համառօտ ձևով։ Այս տեսութիւնը վերաբերում է պատերազմի երրորդ ամսին։

⁂

Սեպտեմբեր

Սեպտեմբերի 14-ին.—Սօպօցնիկի և Դրուսկենիկի մօտ եղած կռիւը վերջացաւ գերմանացիների պարտութեամբ։ Գերմանացիք արտիլէրիական կռիւ են մղում Օսովէց բերդի դէմ։ Ռուսական զօրքերը Գալիցիայում վերցրին Դեմբիցան։ Ուժօկ կիրճում թշնամուն ջարդ տալով ռուսները մտան Ունգարիայի սահմանները։ Վարշավայի գլխին պտտվող «Ցէպպելինը» հրազարկութեան ենթարկվեց և բռնվեց։

Ֆրանսիական զօրքերի ձախ թևում Ուազի, Սոմմի և Րէյմսի միջև ետ մղվեցին գերմանացիների յարձակումները։ Կենտրոնում ֆրանսիացիները կորցրին պրուսական գվարդիայի յարձակումը։ Ֆրանսիական «Միւրզիրիզ» մարտանաւը գրաւեց Կոկօբինը և Կոնգօն։ Հարաւ-աֆրիկեան զօրքերը գրաւեցին Լիւդերիցբուրգը։

Սերբ-չեռնոգորական զօրքերը, որ յարձակվում էին դէպի Սարաեվօ, հասան Րօմանիա լեռներին։ Բելգրադի զօրքերը նեղեցին թշնամուն Ադա-Ցիգանլիա և Ադա-Մալա կղզիներից։

Ճապօնացիները ռմբակոծում են Ցինդաօն։

15-ին.—Ռուսական զօրքերը կռւով շարժվում են առաջ Աւգուստովեան անտառներում։ Ետ մղվեց գերմանացիների առաջացումը դէպի Օսովէց, որի շուրջը արտիլէրիական լարված կռիւ է տեղի ունենում։

Անաջող անցան և ետ մղվեցին գերմանացիների փորձերը ճեղքելու ֆրանսիական զօրաճակատը։

Սերբերը խիստ կռւից յետոյ ետ շպրտեցին աւստրիացիներին և գրաւեցին Զեմլինի գլխաւոր դիրքերը։

Անգլօ-ճապօնական առաջապահ վաշտերը 20 վերստի վրա են գտնվում Ցինդաօյից։

Յունաստանը մերժումով պատասխանեց Թիւրքաց ուլտիմատումին, որ պահանջում էր հողերը վերադարձնել մուսուլմաններին, որոնք գաղթում են յոյների նուաճած Մակեդօնիայից։

Թիւրքիան փակեց Դարդանէլը, առանց նախազգուշացնելու պետութիւններին։

16-ին.—Ռուսական զօրքերը ետ մղեցին գերմանացիների նոր փորձը՝ Նեմանով անցնելու։ Ծանրագոյն կռիւներ են լինում Աւգուստովեան անտառների հիւսիսային կողմում։

Արևմտեան Գալիցիայում Դուկլի մօտերքը ռուսական զօրքերը ջարդ տուին աւստրիական առաջապահ գնդերին։

Գերմանացիների կատաղի յարձակումները Էն և Արգօն գետերի միջև ետ մղվեցին ֆրանսիական զօրքի կողմից։ Բելգիացիները ետ մղեցին գերմանացիների յարձակումները և գրաւեցին Ալոստը, և քանդեցին Մօնսի և Բրիւսսէլի միջև եղած հաղորդակցութիւնը։

Սերբերը Բօսնիայում գրաւեցին Խանպեսակը. արիւնահեղ կռւից յետոյ նորից գրաւվեց Զեմլինը. ետ մղեցին թշնամու յարձակումները Պօրաշիցի ուղղութեամբ։

Ճապօնացիները Ցինդաօյի մօտ գրաւեցին Ֆուշան ամրացված դիրքը։

17-ին.—Ռուսները գրաւեցին Աւգուստովի և Կօպցինի մօտ եղած գերմանական դիրքերը։

Դաշնակից զօրքերը կորցրին գերմանական աջ թևը և հեռացրին գերմանացիներին։ Մասսի աջ ափում ֆրանսիացիները առաջ խաղացին։ Գերմանացիների յարձակումները Սոմմի և Սոմմի ու Ուազի միջև ետ մղվեցին։ Գերմանացիները յարձակում գործեցին անգլիացիների դիրքերի վրա ահագին ուժերով, բայց ոչ մեծ աջողութեամբ։

Կամերունա Դուալան և Բոնավերի կայարանը յանձնվեցին անգլօ-ֆրանսիական զօրքերին առանց պայմանի։

Ֆրանսիական զօրքերի ամբողջ գիծը անցնում է ճակատով Պոնտամուսոնից դէպի Ապրեմոն և Մասս, Սեն-Միլի շրջանում, Մասս գետի աջ ափում, Վերդենից դէպի հարաւ-արևելք։ Վերդենի և Րէյմսի միջև զօրաճակատը ձգվում է Վարենի շրջանում, Սուէնից դէպի հիւսիս։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ սեպտ. 13-ին անգլօ-ճապօնական դաշնակից զօրքերը գրաւեցին Ցինդաօյի ողջ հողերը։

18-ին.—Գերմանացիները նահանջում են Սուվալկի, Լոմժինի նահանգներից և շտապով հեռանում են Օսովէցից։ Նկատվում է թշնամու զօրքերի յարձակումը Պետրոկովի և Կելէցի նահանգների արևմտեան գաւառներում։ Մեր հեծելազօրը ջարդ են տալիս գերմանական առաջապահ զօրքերին, որոնք դուրս են գալիս Անդրէեվ քաղաքից։ Ընդհանուր ճակատամարտ զօրաճակատի լայնութեամբ։

Վևրի հարաւային շրջանում ֆրանսիացիները գրաւեցին Սէշբրէյ և առաջ են խաղում մինչև Րիւպտեմաղ։ Գերմանացիների խիստ յարձակումը Տրասիլէ-Մօնի վրա ետ է մղվում։ Գերմանացիները ռմբակոծում են Լիէր քաղաքը և աւերակ են դարձնում այն։ Գերմանական «Էմդէն» յածանաւը Հնդկական Օվկիանում ջրասոյզ է անում բրիտանական 5 առևտրանաւ և ձերբակալում է ածխահանքի մի բանուոր։

Սերբ-չեռնոգորական զօրքերը Բօսնիայում կատաղի կռւից յետոյ գրաւեցին Վաժենիցա և Իգրեւշէ դիրքերը և Կրալեվա լեռները։

Ճապօնացիները գրաւեցին Ցինդաօյի ամրութիւնների առաջին գիծը և մօտեցան գլխաւոր ամրութիւններին տասը վերստի վրայ։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ

II

Գերմանական ժամանակակից դպրոցի միլիտարիստական ուղղութեան և սարկացած ոգու դէմ բուռն կերպով բողոքել են գերման յայտնի մանկավարժներից շատերը, փորձել են մտնել անհաւասար պայքարի մէջ, բայց միշտ էլ կրել ծանր հարուածներ, ետ են մղվել կրթական ասպարէզից, տեղի տալով «ամենազօր կայզերի» «տեւտոն մանկավարժներին»։

Դպրոցի անարժան ու վնասակար կարգերի երդուեալ հակառակորդներից էր յայտնի մանկավարժ Լիւդվիգ Հուրլիտտ, որ դեռ 12 տարի առաջ խզելով ընդ միշտ իր կապը Գերմանիայի պաշտօնական դպրոցի հետ՝ յայտարարեց նրա դէմ կռիւ, նուիրելով իր շնորհալի տաղանդը կրթութեան էշերի մերկացման գործին, ուժեղ ու խարազանող գրիչը հակամիլիտարիստական անդադրում պրօպագանդի և դպրոցական միջավայրում բուն դրած անբուժելի խոցերի անդամահատութեան։

Այդ ըմբոստ ձայնն արել է «բացառապէս մէջն ամբարած անսահման բողոքի ու զզուանքի զգացումներից դրդված. զգացումներ, որ տածում էր կրթութեան վնասակար սիստեմի դէմ, նախ որպէս գերմանական դպրոցի անպաշտպան սան, և ապա նոյն ուղղութիւնը փոքրերի վրա գործադրող, կրթական պարտականութիւններն ակամայից կատարող գերմանական նախկին ուսուցիչ»։

Հուրլիտտն ուժեղ ու կարուկ շեշտով անխնայ մտրակում է գերմանական այն «ենթասպայական ոգին», որ նրա խուժելով դպրոց՝ կաշկանդել է ուսուցչի ազատ գործունէութիւնը, մանկավարժական խելացի սիստեմը, սարկացնում է սանի կամքը ու ցանկութիւնը և խաւարեցնում է բանականութիւնը։

«Յաղթել և ընկճել փոքրիկի կամքը,—գրում է Հուրլիտտը,—դիմազուրկ անել նրան, ենթարկել դպրոցական շաբլօնի բոլոր պահանջներին—ահա թէ ինչն է համարվում գերման մանկավարժի գործունէութեան փառաւոր դափնին։ Ոչխարային հեզութիւն ու համբերութիւն—ահա այն «պաշտօնական առաքինութիւններն», որ աշխատում են ներշնչել երեխաներին»։

Գերմանիայի ուսուցչական պերսոնալն այնքան է վարժվել իր մեծաւորների անտեղի կարգադրութիւններին և լուռ ու մունջ տարել նրանց անվերջ կամայականութիւնները, որ նրա մէջ մեռել է նախաձեռնութեան ու բարեխղճութեան ոգին, անհատական պատասխանատւութիւն և անկախ ու ազատ գործելու բնական պահանջ... Այդպիսով ստացվել է հետևեալ պատկերը... Գերման ուսուցիչը շատ անգամ հրաժարվում է նոյնիսկ այն կրթական գործից, որի ամբողջ տնօրինութիւնը յանձնվել է իրան...

«Գերմանական դպրոցի ուսուցիչը,—գրում է Հուրլիտտը,—նման է այն թռչունին, որին, փակելով երկար տարիներ վանդակում, զրկել են սլանալու ունակութիւնից ու բընազդից, չի կարող թռչել դէպի ազատ բընութիւն նոյնիսկ և այն ժամանակ, երբ վանդակի դուռն ամբողջովին բաց է նրա առաջ»...

Այն, ինչ որ 40 տարւայ ընթացքում բռնի կերպով պատւաստվեց մատաղ սերընդի թարմ ու զգայուն ուղեղում, այսօր տուեց իր հասած պտուղը. դառն ու մահաբե՛ր պտուղ, որ թունաւորեց քաղաքակրթված Եւրոպան...

Եւ զարմանալի չէ, թէ ինչու Հաուպտմանի նման մեծանուն հեղինակը, Րօլանին գրած պատասխանի մէջ չէ քաշվում ի լուր աշխարհի յայտնել հետևեալը. «Աւելի լաւ կը լինի, եթէ դուք մեզ անուանէք Ատիլլայի զաւակներ, դնէք մեզ վրա երեք խաչ և մնաք մեր սահմանից դուրս, քան թէ մեր գերմանական ազգն իջնի գերեզման մի սանտիմենտալ հեղինակութեան պատճառով, ինչպէս օրինակ՝ Գեօթէի սիրելի յաջորդները»...

Գերմանիայի արժանաւոր ուսուցչութեան փառաւոր յաղթութիւնը նսեմացրեց նրա անարժան յաջորդները՝ գերման իւնկերների խնկարկու սպասաւորները...

Ահա ինչպէս կատարվեց ժողովրդական ուսուցչի ամօթալի պարտութիւնը։

Մ. Ղազարեան

ՎԻԼՀԷԼՄԻ ԽԵԼԱԳԱՐՈՒԹԻՒՆԸ

Վիլհէլմ կայսրը իր խելագարութեան մէջ սահմաններ չի ճանաչում։ Լեհական «Gazeta Czenstochowsna» թերթում տպված է Վիլհէլմ II-ի կոչը լեհերին։

«Լեհեր, դուք, ի հարկէ, յիշում էք, ինչպէս մի գիշեր առանց մարդու օգնութեան սկսվեց Սվեատագորի ս. վանքի զանգահարութիւնը։

«Այն ժամանակ արդէն աստուածավախ մարդիկ հասկացան, որ կատարվեց մեծ և կարևոր անցք, կատարվեց հրաշք։

«Այդ անցքը իմ վճիռն էր Ռուսաստանի հետ պատերազմելու և Լեհաստանին տալու նրա սրբութիւնները և միացնելու նրան կուլտուրական երկրի՝ Գերմանիայի հետ։

«Ես հրաշալի երազ տեսայ։ Ինձ մօտ եկաւ Աստուածամայրը և հրամայեց փրկել իր սրբատեղը, որին վտանգ է սպառնում։

«Նա արտասուալի աչքերով նայեց ինձ, և ես եկայ կատարելու Նրա աստուածային կամքը։

«Իմացէք այդ, լեհեր, և իմ զօրքերին դիմաւորեցէք՝ ինչպէս եղբայրների և փրկարարների։

«Իմացէք, լեհեր, որ ով ինձ հետ կը լինի, առատօրէն կը վարձատրվի, իսկ հակառակորդները՝ կը կործանվեն։

«Ինձ հետ է Աստուած և սուրբ Տիրամայրը։ Նա բարձրացրել է Գերմանիայի սուրը Լեհաստանի օգնութեան համար»։

ՍՈՒԼԹԱՆՆԵՐՈՒ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԷՆ

Կ. Պոլիս, 27 սեպտեմբեր

Թերթերուն արգիլուած է գրել, սակայն երէկ պաշտօնական աղբիւրէն լուր առի, որ իտալական շոգենաւային ընկերութեան Կ. Պոլսոյ ներկայացուցիչները հրահանգ առած են ծանուցանել իրենց շոգենաւերուն, որ անմիջապէս մեկնին Կ. Պոլսոյ նաւահանգիստէն և ապաստանին Սև-ծովու ռուսական նաւահանգիստները։

Ասիկա ծանրակշիռ կարևորութիւն ունեցող իրողութիւն մըն է, վասնզի կամ կը նշանակէ թէ Իտալիա պիտի միջամտէ եւրոպական պատերազմին ի նպաստ երրեակ համաձայնութեան կամ թէ Իտալիա Թիւրքիոյ դէմ առանձնակի գործողութեան մը պիտի ձեռնարկէ, ինչ որ ոչ նուազ կարելի է, թէև դժբաղդ բան մը տարաբաղդ հայութեան համար, որ այս պահուս կը գտնուի անտանելի կացութեան և դառն վիճակի մէջ։

Թիւրքիոյ մէջ ստեղծուած է անտանելի վիճակ մը, վասնզի դեռ կը շարունակուի կողոպուտը իր բոլոր սաստկութեամբ։

Զինուորական փոխանքին վարագոյրը հազիւ փակուած էր, զինուորական գրաւմանց էջը բացուեցաւ։ Իսլամ վաճառականները բացը թողլով՝ բոլոր միւս առևտրականները կը կողոպտուէին։ Առանց մէկ փարա փոխարինութիւն մը կատարելու կը գրաւէին քրիստոնեայ վաճառականներու ապրանքները։

Ձրի առնուած շինուածանիւթերով և նոյնքան ալ ձրի բանուորներով—վասնզի զինուորներէն կառնուին անոնք—կը կառուցուէին բազմաթիւ պետական շէնքեր, ճամբաներ, կամուրջներ, դպրոցներ, նաւամատոյցներ, և այլն։

Կառավարութիւնը այս անխիղճ ու կողոպտիչ քաղաքականութիւնը հասուցած է ծայրայեղ և անլուր շնականութեան մը։ Վերջին օրերս ժողովուրդը տզրուկի պէս քամելու համար ազգային պաշտպանութեան կոմիտէին անունով նուազագոյնը 42 ղրուշ (3½ րուբլի) ըլլալու պայմանով բոլոր վաճառականներէն և տուներէն բռնի տուրք մը գանձուիլ սկսած է։ Այս տուրքին անունը դրուած է նպաստ, և իբր թէ արդիւնքը սահմանուած է զէնքի տակ գտնուող զինուորներու վերարկու, ձեռնոց և բուրդէ գուլպայ առնելու։

Շատեր կառավարութեան այս պահանջին ուղղակի գոյքերը—և անոնց ամենէն առաջնակարգերը—տալով գոհացում տալ ուզած են, սակայն կառավարութիւնը անպատճառ հնչուն դրամ պահանջած է։

Գիւղաքնացութիւնէն դարձին թօյլ չի տրուիր, որ մարդիկ իրենց կարասիները բերեն քաղաք, մինչև որ չվճարեն այդ տուրքը, որուն համար երբեք համեմատութիւն չի պահուիր և անխնայ կուզուի։

Թիւրք կառավարութիւնը վերջին մէկ երկու օրերս յայտնի աւազակութեան նոր եղանակ մըն ալ գտաւ, որ իր բոլոր նախորդները գերազանցեց։

Պատերազմի սկզբնաւորութեան առաջին օրերուն Թիւրք կառավարութիւնը գրաւեց Կ. Պոլսի մէջ գտնուած շաքարին մեծագոյն մասը, իբր թէ զինուորական պէտքերու։

Այս գրաւումէն իրենց ապրանքները ազատողները, բնական է թէ, սթօքին այսքան յանկարծական նուազումէն օգտուելով և նոր ապրանք ստանալու գրեթէ անկարելիութիւնը աչքի առջև ունենալով, սկսան գինները բարձրացնել։

Կառավարութիւնը իբր թէ ժողովուրդին ահաբեկութիւնը և վաճառողներուն չարաշահութիւնը արգիլելու համար խստիւ պատժեց բոլոր անոնք, որոնք սովորական գինէն աւելի կը պահանջէին շաքարի համար։

Զինուորական ատեաններ 20 կամ 40 փարա աւելի գինով շաքար ծախողները դատապարտեցին 1—2 ամիս բանտարկութեան և 50 ոսկի տուգանքի։

Իսկ նոյնքան ծանր պատիժի ենթարկուեցան անոնք, որոնք իրենց խանութին մէջ շաքար ունենալով՝ իրենց յաճախորդներուն կը յայտարարէին թէ շաքար չունին։

Հետևաբար շաքարին գոյութիւնը խանութի մը մէջ տեսակ մը ծանր սպառնալիքի երևոյթը առաւ, և շատերը՝ գրաւումէն ազատելու համար իրենց ապրանքը և միևնոյն ատեն աժան կամ սուղ ծախելու ամբաստանութեամբ պատերազմական ատեաններուն առջև չելլելու համար՝ աշխատեցան իրենց վաճառատունէն հանել շաքարը՝ սակէ գինով ծախելով։

Հետևաբար եկաւ օր մը, որ շաքար չմնաց հրապարակի վրայ՝ մեծագոյն սթօքը կառավարութեան և փոքրագոյն մասն ալ տուներու մէջ հաւաքուած ըլլալով։

Այն ատեն կառավարութիւնը անմիջապէս վերցուց որոշեալ գինէն աւելի չծախելու արգելքը և ինքն սկսաւ իր գրաւած ապրանքը վաճառել մի քանի գներով։ Նախ կառավարութիւնը ինքը կը ծախէ որոշեալ չափով մը, և նախապէս որոշեալ գինով, սակայն իւրաքանչիւր անձէ՝ որոշեալ չափով շաքարը յանձնելէ յետոյ՝ իբր թէ օսմ. նաւատորմին ի նպաստ նուէր կառնէ մէկ մէջիտ (20 ղրշ.)։ Ուստի և շաքարի օխան այս կերպով եռապատիկ գինով ծախուած կըլլայ, կամ շաքարին վրայ իր գինէն կրկնապատիկը սպառման տուրք հաստատուած կըլլայ։

Բացի ասկէ՝ կառավարութիւնը Թիւրք շաքարավաճառներու և շաքարեղէնի գործերով զբաղող վաճառորդներու արհեստապետութեան յանձնած է մեծաքանակ շաքար, որ կը ծախուի ալ աւելի սուղ, գրեթէ մօտաւորապէս 2½ ֆրանքի։

Այս կերպով կառավարութիւնը իրեն համար շահու գեղեցիկ աղբիւր մը ստեղծած կըլլայ, ի վնաս իր ժողովուրդին, անոր ամէն կենսական ու անհրաժեշտ պիտոյքները ենթարկելով ծանր տուրքերու։

Հայորդի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՂԹԱՆՔ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մեզ հեռագրում են Էջմիածնից, որ այդտեղ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ, ամբողջ միաբանութեան և ժողովրդի խուռն բազմութեան մասնակցութեամբ տաճարում կատարվել է գոհաբանական մաղթանք ռուսական զէնքի յաղթութեան համար Թիւրքիայի դէմ։ Մաղթանքից յետոյ Վեհ. Կաթողիկոսը հեռագրով յայտնել է Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին հայ ժողովրդի հաւատարիմ հպատակութեան և անձնուիրութեան զգացմունքները։ Հեռագրել է նոյնպէս և Կովկասի փոխարքային։ Իսկ Մեսրոպ եպիսկոպոսին հեռագրվել է լինել փոխարքայի առաջ՝ Թիֆլիսի թեմի հայ ժողովրդի զգացմունքների արտայայտիչը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Լուրեր Սղնախի շրջանից

Սղնախ, 15 հոկտ.

Սղնախում կազմվեց կոմիտէ, որի նպատակն է պատերազմ գնացած զինուորների ընտանիքներին նիւթական օգնութիւն հասցնել։ Մասնաժողովը ընդունում է նուէրներ թէ դրամով և թէ փողով։ Այս օրերս ժողովելու են տաք իրեր։

Այս տարի Կախեթի մի քանի գիւղերը սաստիկ վնասվել են, առանձնապէս Արթանա, Գրեմի, Սաբուէ և Էնիսէլի։ Այս գիւղերում կարկուտն այնքան փչացրել է այգիները, որ շատ տեղերում խաղողն ընկած էր հողի վրա։ Այստեղ կարկուտը չորրորդ անգամն էր եկել։ Վատ է եղել այս գիւղերում նաև հացի բերքը։

Կնդոլ, Կիսիսխէվի և Մինանդալի գիւղերում նոյնպէս տեղացել է սաստիկ կարկուտ։ Այստեղ փչացել է ոչ միայն խաղողը այլ և խաղողի վազի ոստերն ու տերևները։ Դէպի ներքև՝ Սավդգիանո և Վէլիսցիխէ գիւղերում տեղ-տեղ լաւ բերք է սպասվում։ N. N.

Նորութիւններ գիւղից

Լագոդեխ, 14 հոկտ.

Կաղինի պտուղը մեզանում ներկայումս ծախվում է 1 ր. 80 կ., չորացրած բաժօրը, որ 1—2 ամիս առաջ 54—56 ր. գին ունէր, չափազանց ընկած գին ունի, որովհետև այժմս առևտուրը կանգնած է։

Եղանակը յանկարծակի փոխվեց. լուսնի 1-ից տեղում են առատ անձրևներ, նորից բարձրացան Մածիմի և Բելէքանի գետերը, այնպէս որ՝ կառքերը մեծ դժուարութեամբ են անցնում. անցած ուրբաթ օրը Մածիմի գետով անցնելիս մոլոկան մի ֆուրգոնչիկի ձին խեղդվեց։

Անցած ուրբաթ Բելէքանի տանուտէր Շաբան Մահմադ-Ալի-օղլին հրաւիրանօք լեզգիների գիւղում կայացած ժողովում որոշվեց հասարակութեան գումարներից նուիրաբերել 1000 ր. պատերազմում վիրաւորվածների օգտին։ Այս օրերս ուղարկվելու է դրամը ուր հարկն է։

Բ. ք. Սուքիասեան

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՅՈՅՑ ԲԱԳՒՈՒՄ

Բագուից հեռագրում են «Тиф. Лист.»-ին.

«Կիրակի օրը, քաղաքագլուխ Բիչի նախագահութեամբ կայացաւ քաղ. դումայի արտակարգ նիստը։

«Քաղաքագլխի ճառից յետոյ, իրաւասու Ղասիմ Ղասումով յայտնեց, որ բոլոր թուրքերը մինչև վերջին կաթիլ արիւնը պէտք կռւեն Ռուսաստանի թշնամիների դէմ։

«Իրաւասու Վերմիշեան մի ընդարձակ ճառում արտայայտեց այն միտքը, որ ներկայումս հայեացքների տարբերութիւն չը պէտք է լինի տարբեր ազգութիւնների ներկայացուցիչների միջև, որ բոլոր ազգաբնակութիւնը առանց կրօնի և ազգութեան խտրութեան կը միանայ մի ընդհանուր շարժման մէջ իր կեանքը հայրենիքի պաշտպանութեանը զոհելու համար։

«Քաղաքապետ Մարտինովը ասաց, որ, երբ ինքը գտնվում էր Թիֆլիսում, փոխարքայի մօտ, կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկով հարցրեց իրան, թէ ինչ ուղղութիւն կարող է լինել Բագւում. այդ հարցումին նա պատասխանել է, որ իր գլխով երաշխաւորում է թուրքերի հայրենասիրութեան համար։

«Նիստը փակվեց արտասովոր գոչերի տակ՝ «Ուռա»... «Կեցցէ Ռուսաստանը։ Կեցցէ հայրենիքը, ռուս զօրքը» և այլն։

«Յոյցը տևեց գրեթէ 20 րոպէի չափ։

«Հեռագիրներ ուղարկվեցին ամենքին ոգևորող հաւատարիմ հպատակութեան արտայայտութիւններով»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ռուս հայրենասէրների ընկ. ներկայացուցիչ Ֆ. Տիմօշկինին նահանգապետը թոյլատրել է հոկտ. 22-ին մի համերգ տալ ընկ. շէնքում։ Համերգի զուտ արդիւնքը յատկացվելու է վիրաւորների օգտին։

◆ Քաղ. վարչութիւնը ձեռք է բերել 200 երկաթէ մահճակալ վիրաւորների հիւանդանոցի համար:

◆ Վաճառականութեան հաշւով պահւող հիւանդանոցի կահաւորութիւնը կը վերջանայ կիրակի, ամսիս 26-ին:

◆ Նահանգապետը թոյլատրել է իշխանուհի Նինա Թումանովային տներում կամաւոր հանգանակութիւն անել պապիրոսով և ծխախոտով, որոնք անմիջապէս պէտք է ուղարկվեն գործող զօրաբանակը:

◆ Այսօր, մաղթանքից յետոյ, սկսվում են այգեգործական դպրոցի զբաղմունքները:

◆ Թիֆլիսի I բանտի նոր շէնքը վերածվում է հիւանդանոցի, որի կահաւորման գործը մեծ թափով առաջ է գնում:

◆ Ձեռնարկվել է երկրորդ կարգի հիւանդանոցների կահաւորութիւնը՝ արական II գիմնազիայի շէնքում, Հաւլաբարի և Նիկոլայեվսկի դպրոցների շէնքերում, Սէյլանովի տանը, Զէրքէզովի և Պուշկինի անուան քաղաքական դպրոցներում:

◆ Հայկական հիւանդանոցը բոլորովին կահաւորված պատրաստ է և, ինչպէս յայտնում են մեզ, կիրակի օրը տեղի կունենայ բացումը:

◆ Օզուրգէթի գաւառապետ Զերնով իր պաշտօնով փոխադրվում է Գալիցիա:

◆ Կուր գետը վերջին օրերս սաստիկ վարարել է և հասել է գարնան ջրի մակերեւոյթին:

◆ Թիֆլիսում վերջերս աշնանային խոնաւ եղանակներ են և զգալի ցուրտ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

—

◆ «Սախ. Գազէթի» լրագրի խմբագիր Ն. Կուրդղէլաշվիլիի երկրորդ դատը Թիֆլիսի դատաստանական պալատում նշանակված էր հոկտ. 15-ին: Իր լրագրի անցեալ ապրիլի համարներից մէկում տպված «Արթնացիր ազգ» և «Բանւորական մամուլի տօնը» վերնագրով երկու յօդուածների համար նա մեղադրվում էր 129-րդ յօդ. համաձայն: Պալատը երեկ. ժամը 8-ին կայացրած վճռով Կուրդղէլաշվիլիին արդար ճանաչեց: Պաշտպանում էր երդւ.-հաւ. օգն. Շ. Ալ. Մեսխիշվիլին:

◆ Թիֆլիսի 7-րդ գործակալութեան քահանաները աւագ-երէց Մաճարաշվիլիի նախագահութեամբ հոկտ. 15-ին կայացած ժողովում որոշել են իրանց հաշւով մի մահճակալ ունենալ վիրաւոր զինւորների համար:

◆ Գուրիայի Բախուի գործակալութեան հոգեւորականները գործակալ Դումբաձէ քահանայի նախագահութեամբ ժողով են կայացրել և որոշել մինչև պատերազմի վերջը ժողովրդից «Դրամա» կոչված տուրքը չը վերցնել և, բացի այդ, իրանց ռոճիկից ամսական երկու տոկոս յատկացնել պատերազմի գնացած զինւորների ընտանիքների օգտին:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Օպերա

Ամեն անգամ, երբ օպերային խումբը ներկայացնում է Մէյէրբերի «Հուգենոտներ» օպերան, ես մի առանձին յափշտակութեամբ եմ լսում նրա երաժշտութիւնը, այնքան նա գրաւիչ է ու ազդու:

Բացի այն, որ «Հուգէնոտների» բովանդակութիւնը յայտնի է վաղուց, մասնաւորապէս նրա երաժշտութեան մասին քանիցս գրվել է նաև «Մշակում»:

Ներկայ օպերային խումբը դնելով այդ պիէսը՝ հնարաւորութիւն տուեց իր առաջնակարգ ույժերին ցոյց տալ հասարակութեանը իրանց ձիրքերը ձայնական ու խաղի տեսակէտից:

Այսպէս՝ Միխայլով, որ այս խմբում համարեա առէպ հանդէս եկողներից մէկն է, ապացուցեց, որ շնորհալի Րաուլ է: Առանձնապէս յատակ է վերցնում երգիչը վերին նոտաները:

Ստարօստինան Մարգարիտայի դերում աննման էր: Այդ երգչուհին օրէ-ցօր գրաւում է հասարակութեան ջերմ վերաբերմունքը և իրաւունք էլ ունի: Արդէն սկզբից նա իրան ցոյց տուեց փորձված դերասանուհի, իսկ յետագայում երևաց նրա ձայնական գեղեցիկ հնէջը, ախորժալուր լիրիկ սոպրանօն:

Ճկուն ու առողջ ձայնի տէր է տ. Իվօնին, որ ունի բեմական բոլոր տուեալները առաջնակարգ դերասանուհի կոչվելու: Անցեալներում Վալէնտինայի դերում հանդէս էր գալիս Ալէշկօն: Տիկին Իվօնին ոչ նուազ աջողութեամբ է տանում Վալէնտինայի հոգեբանական դերը, միայն համեմատութեամբ Ալէշկօյի հետ՝ սակս նրա նման զգացմունքով երգելը չունի:

Նիկօլսկին անպայման ստեղծված է կոմս Սէն-Բրիի դերի համար: Նրա անբռնազբօսիկ շարժումները, ազատ խաղն ու վոկալ կատարումը վեհութիւն էին տալիս նրա դերին:

Չը մոռանանք յիշել Մարսէլի դերի մասին, որի «երգուեալ» ու տաղանդաւոր կատարումը պատկանում է... Շվէցին:

Կովէլկօվան սովորականի նման հանդէս էր եկել այս պիէսում մանկլաւուհի Ուրբանի դերում:

Աջող էր նաև Լիւբչէնկօն կոմս Նեվէրի դերում:

Ընդհանուր բեմադրութիւնը, բալէտը և խորը տպաւորիչ էին:

Այդ օրվայ համաժողովրդական հայրենասիրական ցոյցերի տպաւորութեան տակ և Թագաւոր Կայսրի գահակալութեան օրվայ առիթով թատրոնը լցված հասարակութեան պահանջով՝ օրկէստրը նուագեց ռուսական և մեր բոլոր դաշնակիցների ազգային օրհներգները բուռն ոգևորութեան մէջ:

Ե.

—

Հայկական ներկայացում

Երկուշաբթի, հոկտեմբերի 20-ին, Հայոց Դրամատ. Ընկ. խումբը, մասնակցութեամբ դերասան Շախնաթունիի, ներկայացրեց Իւժինի «Դաւաճանութիւն» դրաման, որ այժմ ռուս-թիւրքական պատերազմի առիթով դարձել է ռազմական պիէսա:

Աբէլեանի (Օթար-բէգ), տ. Մայսուրեանի, (Զէյնաբ), Աւետեանի (Բէսօ), Աշխէնի (Իսախար), Շախնաթունու (Դաթօ) մասին մենք չենք կամենում խօսել, քանի որ նրանց խաղի մասին յաճախ խօսվել է: Նոր դերակատարների մասին կը նկատենք, որ տ. Սեւումեան շատ գեղեցիկ Գայիանէ էր և իր խաղով հաստատեց մեր այն կարծիքը, թէ նա կարող է շատ պիտանի ույժ լինել հայ բեմի համար: Միասէն (Ռուքայա) կարողացաւ ճշգրիտ պատկերացնել հարէմական կրքոտ հարճը, որ այնքան անգամ նկարագրվել է վէպերի մէջ: Մանուէլեան (Սուլէյման-խան) ըմբռնել էր ֆատալիստ և իրան նախախնամութեան գործիք համարող բռնապետի հոգեբանական դժուար դերը: Վատ չէր և Բերոյեան (Էրէկլէ), մանաւանդ որ նա, Ալիխանեանի հիւանդութեան պատճառով, յանպատրաստից էր խաղում:

Մի մեծ թերութիւն, որի մասին չենք կարող լռել, դա ներկայացումը ժամը $1^1/_4$-ին վերջացնելն էր: Պէտք է աշխատել, որ այդպիսի անյարմարութիւն այլևս չը կրկնվի: Նկատելի էր նաև, որ դերակատարներից ոմանք դերերը չը գիտէին:

Ներկայացման միջին դերասանական խումբը ներկայացրեց Շահխաթունուն, որ զինւոր է կոչված, մի թուր, բարեմաղթելով նրան անվտանգ վերադառնալ պատերազմական դաշտից:

Ա.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 20 հոկտեմբերի

Կովկասի հայ և ռուս թերթերում վերջերս լուր էր տպված, որպէս թէ Մայր Աթոռի Գանձարանից 85,000 րուբլու կորուստ է եղել: Ես, որպէս սինօդի հաշուապահ, հարկ եմ համարում յայտնել, որ այդպիսի կորուստ կամ իւրացում տեղի չէ ունեցել:

Անհաւատալի գործի էութիւնը. ութսուն և հինգ հազար րուբլու բանկային անուանական տոմսերը յանձնված են սինօդի անդամ Մատթէոս եպիսկոպոսին, նրա ստորագրութեամբ, ժամանակը լրացած լինելու պատճառով, տոմսերը փոխելու և տոկոսներով մի տարի ևս թողնելու բանկում:

Մատթէոս եպիսկոպոսը հոկտեմբերի 5-ին յայտարարութեամբ յայտնել է սինօդին, որ անուանական այդ տոմսերը կորցրել է, չը յիշելով թէ ինչ պարագաներում և որտեղ: Այդ մասին անմիջապէս յայտնվել է բանկային վարչութեան, որ կորած տոմսերը ոչնչացած համարէն և դրանց փոխարէն տրվեն նորերը, հետևաբար դրամական ոչ մի կորուստ չէ եղել և կորած տոմսերով օգտվել ոչ ոք չէ կարող:

Սինօդի հաշուապահ Մ. Մանուէլեան

Ծանօթ. խմբ. — Բագրատ եպիսկոպոս, որ ներկայումս գտնվում է Թիֆլիսում, երէկ Էջմիածնից ստացել է հետևեալ հեռագիրը. «85,000 րուբլու բանկային տոմսերը գտնվեցին գանձապահի դրամարկղում, ետ դնված թղթերի մէջ»:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Հաւլաբարի սպառողական ընկ. վարչ. անդամներին

—

Թիֆլիս, 20 հոկտ.

Ներկայ յունիսի 22-ին նախկին վարչութիւնը, զգալով իր անզօրութիւնը գործը ղեկավարելու, ընդհ. ժողով գումարեց, ուր ի միջի այլ խնդիրների բացէ ի բաց յայտարարեց, թէ ինքը չը կարողանալով այսուհետև գործը շարունակել՝ առաջարկում է լիկվիդացիայի ենթարկել՝ բաւարարութիւն տալու մանր փայատէրերին: Դուք, օգտվելով այն առիթից, որ փայատէրերից շատ քչերն էին ներկայ, ձեր կուսակիցների հետ, չը գիտեմ ինչու, ցանկացաք շարունակել կամ կենդանացնել (ձեր խօսքով) այն գործը, որը արդէն հոգեվարքի մէջ էր նախկին վարչութեան շնորհիւ:

Գովելի էր ձեր անսահման եռանդը, և ոչ մի յետին նպատակ էլ չէի փնտռել ձեր եռանդի մէջ. միայն մի բան, որ շատ զարմանալի թւաց, այդ այն էր, որ խանութի ապրանքների գրեթէ կմախքն էր մնացել, իսկ հիմա էլ գրեթէ ոչինչ չէ մնացել, և դուք դուք նոյն տօկուն եռանդով շարունակում էք գործը ի վնաս այն մարդկանց, որոնք երբեւիցէ այնքան միամիտ են գտնվել, որ իրանց կոպէկները հաւաքել են սպասելով ոսկէ սարեր:

Որովհետև գործը սկսված է հասարակական հիմունքներով և նրանց կոպէկներով, ուստի ցանկալի է մի երկտողով բացատրութիւն տաք լրագրութեան միջոցով այդ հիմնարկութեան 300 անդամից գոնէ 250-ին, որոնք բնաւ չը գիտեն, թէ ինչ դրութեան մէջ է գործը կամ ապահով են իրանց տուած կոպէկները թէ ոչ. բացի այդ՝ նոյնպէս ցանկալի է իմանալ, եթէ խօսք գործը լաւ չէ գնում, ինչու լիկվիդացիայի չէք ենթարկում և բաւարարութիւն տալիս թէ պարտատէրերին և թէ փայատէրերին. սպասում ենք:

Փայատէր

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիֆլիս, 22 հոկտեմբերի

Շամքորեցոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը մայրապետ Հռիփսիմէ Թայիրեանցին, որ նուիրեց յօգուտ մեր խնամքին յանձնված դպրոցի 100 րուբլի: Նոյնպէս տ. Վ. Տէր-Յովհաննիսեանին, որ Ներսէս ք. Քարիմեանի միջոցով նուիրեց դպրոցին 25 ր. ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ տ. Ս. Յարութիւնեանի:

Հոգաբարձութիւն

—

Թիֆլիս, 20 հոկտեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. հիւանդանոցում մի-մի վիրաւորի պահպանութեան ծախքն յանձն են առել՝ Ն. Պ. Զարգարեանը, Լ. Ն. Փրիդոնեանը, Ե. Խ. Զարգարեանը և Ա. Ա. Շահվերդեանը:

Ստացված են նուէրներ Ե. Ս. Խանդանօվից՝ 3 ր. 14 կ., Մ. Ի. Եղիազարեանից՝ 12 զոյգ թաշկինակ, 6 զոյգ գուլպայ և 6 հատ շապիկ, Ե. Տ. Եարալովից մի հատ երկաթէ մահճակալ, Ա. Ի. Փաւլինեանից 40 կտոր գիրք:

Խորհուրդ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

—

Մահափորձ Բուքստօն եղբայրներու դէմ

Բուքրէշ, 17 հոկտ. (Ն. տ.)

Անգլիական «Թայմզ» մեծ օրաթերթի արտաքին քաղաքականութեան խմբագիր Նօէլ և բրիտանական պարլամենտի անդամ, յայտնի հրապարակախօս Չարլս Բէկստօն եղբայրները տարիներէ ի վեր կաշխատէին բալկանեան դաշնակցութեան մը գաղափարը գործնականացնելու: Եւ ոչ թէ միայն կաշխատէին, այլ և նախաձեռնողներն էին ու ղեկավարները Լօնդօնի բալկանեան կօմիտէին:

Բէկստօն եղբայրներու միակ ձգտումն եղած էր թիւրքական միահեծանութեան, պանիսլամական դիւանագիտութեան դէմ ցցել բալկանեան համար գործակցական ույժը, բաւն իսկ բալկանեան ազգերու տնտեսական ու քաղաքակրթական բարգաւաճման համար:

Վերջին բալկանեան պատերազմէն վերջ, սոյն երկու եղբայրները մասնաւոր առաքելութիւնով մը եկած էին բալկանեան պետութիւններու կարծիքները շօշափելու, բալկանեան քայքայուած դաշնակցութիւնը վերստեղծելու մտադրութիւնով:

Բէկստօն եղբայրները Բէլգրադ, Աթէնք, Ցէտինիէ և Սօֆիա այցելելէ, իրենց պրոպագանդը գործնապէս շարունակելէ վերջ, թիւէս 8 օր առաջ Բուքրէշ ժամանած էին ու ներկայացած Կարօլ Ա.-ի՝ վերջապէս սա միջազգային պատերազմի միջոցին բալկանեան դաշնակցութիւնը վերստեղծելու և երրեակ զինակցութեան պարտութիւնը փութացնելու նպատակով:

Արդէն ամսէ մը ի վեր Կ. Պօլսոյ երիտասարդ-թիւրքական մամուլը յանձին «Թասփիրի էֆքեարի» և «Թանինի» ծայր աստիճան սուր քննադատութիւն մը սկսած էր՝ Բէկստօն եղբայրներու հասցէին լուտանքներ ու անէծքներ տեղալով:

Հազիւ թէ Կարօլ Ա.-ի մահուան գոյժը Կ. Պօլիս հասած, Հասան Թահսին Րէջէբ անունով ծանօթ հրապարակագիրը Կ. Պօլսէն Սօֆիայի գծով Բուքրէշ կուգայ և կիջնանի այն պանդոկը, ուր կը բնակէին Բէկստօն եղբայրները, վերջիններու վրայ տէրրօր մը կազմակերպելու նպատակով:

Հոկտ. 15-ին ամբողջ Բուքրէշի հասարակութիւնը գլխաւոր պողոտաները բռնած էր, թագաւորական թաղումը դիտելու համար: Ամբողջ ոստիկանական կազմը զբաղած էր այն գծի պաշտպանութիւնով, ուրկէ պիտի անցնէր կայսերական դագաղը, օտար դեսպանական կազմը և այլն և այլն:

Դագաղը սեւերու մէջ ծածկուած՝ պալատին դուռնէն դուրս հանելու միջոցին, Բէկստօն եղբայրները, իրենց հետ ունենալով բուլղար նախկին վարչապետ Գէշօֆի որդին, դուրս կելլեն պանդոկէն ստօմօբիլով մը՝ Գէշօֆի սեփականութիւն եղող գիւղը երթալու համար:

Տէրրօր կազմակերպելու մտադրութիւնով Բուքրէշ ժամանող մեր երիտասարդ-թիւրք փիլիսոփան՝ Հասան-Թահսին Րէջէբ-բէյ կը հետևի անոնց և փողոցի անկիւնը, ստօմօբիլ նստելու միջոցին վեցհարուածեանով մը ծանրապէս կը վիրաւորէ Բէկստօն եղբայրները և Գէշօֆը: Բէկստօն եղբայրներէն մին, Նօէլ, թոքերէն վիրաւոր, ծանր վիճակի մէջ է, իսկ միւսը՝ դէմքէն վիրաւորած: Գէշօֆի որդին գլխէն շատ թեթև վէրք մը ստացած է և վտանգ չկայ:

Հրազէնի պայթիւնէն անմիջապէս վրայ կը հասնին ոստիկան [illegible] կան պաշտպանութեան վրայ:

Երբ չարագործը ձեռնկապ ներկայացուցին վիրաւորներուն, Բէկստօն եղբայրներէն մին ըսաւ.

— Պարոն, աղէկ որ գնդակդ դրժ-դրժ չէր:

Հարցաքննութիւնը կը շարունակուի: Րէջէբ էֆէնդիի յայտարարութիւններէն այնպէս կեզրակացնեն, թէ երիտասարդ-թիւրքերը յատկապէս ղրկած են մահափորձը կատարելու համար:

Տեղւոյս քաղաքական շրջանակները շատ զգացուած են: Ժողովուրդը յուզուած գնաց ոստիկանատան աղջն աղաղակելով «Կախաղա՛ն, կախաղա՛ն վատ թիւրքը, որ մեր սրբազան թաղումը եղծանել փորձեց»:

Լեւոն Շահազիզեան

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Պուշկին., Վորոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ս. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—$9^1/_2$—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.:
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.:
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երկշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԳՈՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—99

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՍԵՐ
ֆրանսերէնի և հայերէնի, լեզու և գրականութիւն:
Դիմել՝ առ. ժ. 9—$11^1/_2$, եր. 5—7. Большая Ванкская ул., № 10.
(օ. մ.) 927. 10—6

Գիւղատնտեսական Բիւրօ
Գիւղատնտեսութեանը եւ կօոպերացիային վերաբերող խորհուրդներով իրան դիմողներին
ԳԻՒՂԱՏՆՏԵՍ
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ
Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) առաւօտ. ժ. $8^1/_2$-ից մինչև $10^1/_2$-ը, երեկ. ժ. $5^1/_2$-ից մինչև $7^1/_2$-ը: Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատասխանի համար պէտք է ուղարկել 2 հատ 10 կոպէկանոց պօստային մարկաներ:
Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.
(Ե. Հ. Կ.) 921. 0—8

Ծախվում են
1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ»՝ նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ռեցեպտներով: Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ [illegible] և այլ ցաւերով չը վարակվելու համար: Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, ռեցեպտներով: Գինը 50 կոպ.:
2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐ ԱՌՋԵՒԻ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը: Բազմաթիւ անոյին դեղեր և խորհուրդներ: Շատ պարզ ու հասկանալի լեզուով: Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին: Գինը 30 կոպ.:
3) «ԾԻԾԱՂԻ ՏԿԱՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտների ու սրախօսութիւնների ժողովածու: Ծիծաղաշարժ տկճարի պատկերը գրքի երեսին: Գինը 20 կ.:
Այս երեք գրքերը միասին պահանջողներին
ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ
երեք հետևեալ գրքերը. 1) «Նիկարմատի շալվարը» ծիծաղաշարժ փոքրիկ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն գաղութում», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, գիւղական նկարներով, գինն է 7.:
Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով: Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.
(Հ. Կ.) 327. 100—43

ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆԻ
«ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» Զ. տպ. 1 ր.
«ԳՐԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ»
հեղինակի ձեռքով բարեփոխած, Գ. տպագրութիւն. . . 5 կ.
Վաճառվում են բոլոր գրախանութներում: Պատրաստ է տպագրութեան համար «Հայ հեղինակների» II հատորը:
(Հ.Կ.) 925. 5—5

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բագու, Կրասնովոդսկայա փ. տ. Աւան-Իզքաշեանցի. Հեռախօս №№ 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար խսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից:
Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին $^1/_2$ ֆունտ կամ 200 գրամմ:
Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով:
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ):
Ջրի շարժիչներ (տուրբինաներ):
Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից:
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից:
Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից:
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից:
Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով:
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(Հ.Կ.) 551. 0—41

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետևեալ հրատարակութիւններից
1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրձին, I և II հատորներ . . . . 1 ր. 50
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի 40
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօյի, հատոր I, երկրորդ տպ. . . 1 ր. 20
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . 40
5) ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ . . . 15
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանաստեղծութեան, Հ. Առաքելեանի 50
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի . . . 1 ր.
8) ՑՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի 40
9) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպգրութիւն), Ստ. Մալխասեանցի . 40
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի 35
11) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . 15
12) ԱՆԳԼԻԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, Թարգմ Մ.-ի 15
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի 30
14) ԳԱԼԻԼԷՑԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի 25
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՇԱՆՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ, Մակ. եպ. Բարսեղեանցի . . 1 ր. 80
16) ԴԻՐԱՐ ՕՏԵԱՆ. . . . 15
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ, Արթիւր Միւլլեր, Թարգմ. . 40
18) ՓԱՐԱՒՈՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղիեան . . . 15
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII. . . . 40
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶ, ԹՈՔԱԽՏ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ, բժ. Արտ. Շիւեան .
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, вр. Арт. Шиваянъ . . 20
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն միանգամից, փոքր ինչ [illegible] կը ստանան 30% զեղչ և [illegible] 25%.
(6) 0—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный